# Ա.

## ԾԻՍԱԿԵՆՅԱՂԱՅԻՆ ԵՐԳԵՐ ԵՎ ՊԱՐԵՐԳԵՐ

### 1 (81). ԹԱԿՎՈՐԻ ԳՈՎՔ

Ծինեյե՛ր, հը՛յ, շինեյե՛ր,
Ծեն ու շեմգալ կարտրեյեր,
Մունն ու գկերան նուր գանգյեր,
Թակվոր էլավ արևելույ.
Քար քաղեյե՛ր, կավակ մաղե՛ր,
Ըն քըրի դեխ՝ փունջ մը ռեհան,
Ըն ավվի դեխ՝ վարտ մանիշագ,
Պերինք տրինք մըր թակվորի արևուն հըմար:
Տաշտի ծաղից օր ծաղգռավ,
Թուփն ու դերն օր թփռավ,
Վարտ, մանիշագ օր վարառավ՝
Սուրպ խաչ վրեն, օր պակմանան,
Պերինք տրինք մըր թակվորի արևուն հըմար:
Կայեք պերեք կուտան չոլեն,
Թող կը մյնի դարբասխանեն,
Պերինք վըրգուք սուրբ սեղանին
Սուրպ խաճ վրեն, օր պակմանան,
Պերինք տրինք մըր թակվորի արևուն հըմար:
Կայեք պերեք կառն ի քովեն,
Թող կը մյնի դարբասխանեն,
Պերինք վըրգուք սուրպ սեղանին,
Սուրպ խաճ վրեն, օր պակմանան.
Պերինք տրինք մըր թակվորի արևուն հըմար:
Կայեք պերեք գառնուգ չոլեն,
Թող կը մյնի դարբասխանեն,
Պերինք վըրգուք սուրպ սեղանին,
Սուրպ խաչ վրեն, օր պակմանան,
Պերինք տրինք մըր թակվորի արևուն հըմար:
Թակվո՛ր էլավ արևելույ.
Ուր մըշ գլոդեր, առաճ գիկեր,
Էլեք կեղով էրտանք թակվորի առեճ...
Խերն ու պարին՝ վըր մըր թակվորին:

### 2 (82). ԹԱԳՎՈՐԱԳՈՎՔ*

Օրշենք թակվորի ջամալը,
Կերբին՝ լուսափայլ ունենա,
Լուսափտյլ խնտրենք աստանից
Խելոք, խոնարհ գառ ըլնենա:
Գառ ըլնենա հենց էն վախտին,
Ուրախ սրդով կանգնի թախտին,
Տքավորի էդ իր բախտին,
Ռանգին ու վտքաո ըլնենա:
Ռանգին վաքաո թրմաով շուր,
Լավ դանդ ու փող, աքրասք ու շուր:
Խալաթ կանչեյնենք իրեն հարմար,
Խուլղադար լինի, լավ ու բարի,
Աքրեն մինչև հարուր դարի:
Էրտա, ոդքը չաոնի քարի,
Թող էրտա պայյաո ըլնենա:
Պայյառավոր տու կայնաչ ես,
Կարմիր վարտի նման՝ բաց ես,
Գուլուլ մանու պես՝ ծառըաչ ես,
Ուրախ ու խաղաղ ըլնենա:
Խաղաղ ըլ̈ր մեր հաղի պես,
Որ սնանենք մաղաղլի պես,
Իրուր հեղ չաղգեն բաղի պես,
Գարուս ու ամառ ըլնենա:
Ամառ ըլնի ոդավորին,
Տան ու դեղին, ոդավորին,
Կաքավի պես՝ հոդավորին,
Անմահ գառ, մաքառ ըլնենա:
Պայծառ ասի հենց Փանոսը,
Յար ըլնի սուրբ Մաթևոսը,
Իրանց պահի՝ Քրիստոսը,
Խուրմի նման՝ ծառ ըլնենան:
Քերեք խաչեղբայր քավորին,
Համամ դանենք թակավորին,
Ծոր հազցնենք՝ գառ ըլնենա:
Գառ ըլնենա, հենց էն վախտին,
Ուրախ սրդով բազմի թախտին,
Տքավորի էդ իր բախտին
Ուրախ ու խաղաղ ըլնենա:

### 3 (83). ԹԱԳՎՈՐԱԳՈՎՔ

Օրհնեալ է աստվաչ, խաչ հանեք գլխուս,
Դաս-դաս կազմեցավ, ճուղ-ճուղ բազմեցա՛վ:
Բացվել ես բացվաչ ինչպես կարմիր վարտ,
Փայլդ եմ տեսեալ պայյառ ու զվարթ:
Դու նոր թակավոր, դու ես կարմիր նոր,
Ամուսինդ՝ խնչոր,
Ձեզ պահէ պայյառ՝ Տե՛րն երգնավոր:
Բացվել ես բացվաչ, ինչպես կարմիր վարտ,
Փայլդ եմ տեսեալ պայյառ ու զվարթ.
Հրավիրյալ բոլոր համաչայնելով՝
Քաղցրաչայն կքառ տաղերս երգելով,
Ձեզ պահէ պայյառ՝ Տե՛րն երգնավոր:
Դու կայնաչ ես կազմաչ թախտին,
Որ հասանես բարի բախտին,
Մենք էլ այսօր ժողովեցանք,
Միաբերան քեզ գովեցանք,

* Այս թագվորսագովքը, ինչպես նաև՝ 3(83), 7(87), 8(88), 9(89) հարսանեկան գովքերը գրառել ենք Ակունք գյուղում՝ 87-ամյա, խոսքաշեն Պողոս Բունիաթյանից, ծնված Պարսկաստանի Փերիա գավառի Նամակերտ գյուղում (պապերը՝ մշեցիներ են): Հայաստան են ներգաղթել և Թալինում վերաբնակվել 1946թ.: Երգերը լսել և սովորել է Նամակերտում, հարսանեկան ծեսերի ժամանակ: (Ծան. կազմողի):

Դու նո՛ր թակավոր, դու ես կարմիր նոր,
Ամուսինդ՝ խնչոր,
Ձեզ պահէ պայչառ՝ տերն երգնավոր:
Ահա՛ թակավոր, ես քեզ աեսանեմ,
Քաղցր եւլանագով քեզ գովաբանեմ,
Սիրով ես վառեալ, սե՛ր մաղուցանեմ:
Քաջվել ես քաշվաչ ինչպես կարմիր վարդ
Փայլդ եմ տեսեալ պայչառ ու կվարտ:

## 4 (84). ՀԱՐՍ ՈՒ ՓԵՍԱՅԻ ԳՈՎՔ

1

Մըր թակվորներ էլան սարեն
Ծըր թակվորներ էլան սարեն,
Քառսուն սփպուր բիպաց քըրեն,
Քսանուչորս սուրպ մարկարեն
Գօրշնեն կթակվոր ու կթակուհին:

Ցորեն ցանի՝ գանաճ էր պուս,
Էրուսաղեմ իճեր էր լուս,
Հոռոմսիմեն ուր քառսուն գուս՝
Գօրշնեն կթակվոր ու կթակուհին:

Մելքոն, Գասպար ու Բաղդասար,
Աստղ մը դեսան մըճ Հնդստան,
Հիսուս չնվավ Բըքքստան,
Բեդրոս, Բողոս Ֆրանգստան,
Գօրշնեն կթակվոր ու կթակուհին:

Էլավ հարավու քամին,
Նոյ Նահաբեդ նստավ գամին,
Ուր հեդ վերուց հացն ու կկինին,
Դիպգին դվեծ՝ Էճմիածին,
Օրշնեց կթակավոր ու կթակուհին:

Ըլ ինճ ու ինճ, ըլ ինճ ու ինճ
Հըդ իրաց
Ըմբես քաղեք սթուփն ու կաերն
Հըդ իրաց,
Ըմբես չաղգին,
Ըմբես թպոին,
Հարս ու փեսեն՝ հըդ իրաց:

## 5 (85). ՄԸՐ ԹԱԿՎՈՐՆԵՐ ԷԼԱՆ ՍԱՐԵՆ

2

Մըր թակվորներ էլան սարեն,
Ծըր թակվորներ էլան սարեն,
Քառսուն ախպուր բխաց քարեն,
Քսանուչորս սուրպ մարկարեն՝
Օրշնեն կթակվոր ու կթակուհին:
Սուրբ Կարաբեդ մըճ գրագին,
Քառսուն ախպուր մըճ ուր բագին,
Իբ տուռ գիկեն կառն ու մաքին,
Սադաղ գէննն՝ լուս գիրագին:
Ցորեն ցանեմ նանաչ էր բուս,
Էրուսաղեմ իճեր էր լուս,
Հռիփսիմեն ուր քառսուն գուս՝
Օրշնեն կթակվոր ու կթակուհին:
Կացե՛ք պերեք գոունգ չոլեն,
Թող կը սդըր դարբասխանեն,
Ջնդրիգ կարգենք սուրպ սեղանին՝
Օրշնեն կթակվոր ու կթակուհին:
Կացե՛ք, պերեք կութան չոլեն,
Թող կը սդըր դարբասխանես,
Ջնդրիգ կարգենք սուրպ սեղանին՝
Օրշնեն կթակվոր ու կթակուհին:

## 6 (86). ԹԱԿՎՈՐԻ ՄԵՐ ՏՈՒՐՍ ԱՐԻ՛

Թակվորի մե՛ր, տուրս տրի,
Թակվորի մե՛ր, տուրս արի,
Դե՛ս ինճիր ըմ յըս պերի.
Կլուխ դմպող իմ պերի:
Թակվորի մե՛ր, տուրս արի,
Թակվորի մե՛ր, տուրս արի,
Դես ինճիր ըմ յըս պերի.
Ծամիր՝ քեբռող իմ պերի:
Թակվորի մե՛ր, տուրս արի,
Թակվորի մե՛ր, տուրս տրի,
Դես ինճիր ըմ յըս պերի.
Քու դուն՝ ավռող իմ պերի:

## 7 (87). ԹԱԳԱԳՈՎՔ

Թակվորի հայրը, հայրը բետք է գա,
Էս թագը դեսնէ,
Որ էս թագը կարտարեալ է, գանա՛ճ է, գարմի՛ր,
Թակվորի մայրը, մայրը բետք է գա,
Էս թագը դեսնէ,
Որ ես թագը կարտարեալ է, գանա՛ճ է, գարմի՛ր:
Թակվորի հորեղբայրն, հորեղբայրն բետք է գա,
Էս թագը դեսնէ,
Որ էս թագը կարտարեալ է, գանա՛ճ է, գարմի՛ր:
Թակվորի եղբարքն, եղբարքն բետք է գան՝
Էս թագը դեսնեն:
Որ էս թագը կարտարեալ է, գանա՛ճ է, գարմի՛ր:
Թակվորի հրավիրեալքն, հրավիրեալքն բետք է գան,
Էս թագը դեսնեն,
Որ էս թագը կարտարեալ է, գանա՛ճ է, գարմի՛ր:

## 8 (88). ԹԱԳՎՈՐԱԳՈՎՔ

Թակվորահե՛ր, աչքդ լուսին,
Կարմիր կաբենք՝ աջ ու ուսին,
Զուխտ անենք սիրուն թակավորին,
Գլխին բոլոր ճար ունենա.
Ճար ունենա հենց էն վախտին,
Ուրախ սրտով բազմի թախտին,
Տրավորի բարի բախտին:
Տեր Կարաբեդը սայլերով,
Առ աստվաչ փառաբանելով,
Թակվորին գովինք օրշնելով,
Գլխին՝ խաչ նշան ունենա:

## 9 (89). ԾԱՌԱԳՈՒՎԸ*

Ծաղգունքլի ծառը ծաղգեցավ,
Ծաղգունքլի ծառը ծաղգեցավ,
Սուրբ ճրագը նոր վառեցավ,
Կանգուն սերը՝ մգրդեցավ,
Ի լույս պայծառ կարտարեցավ,
Լույսն ի պայծառ՝ մեկ քաղցրացավ:

## 10 (90). ՄԵՐԻԳ, ՄԵՐԻԳ

Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Անուշ մերիգ, անուշ մերիգ:

Լուսուն գելիս՝ մ'ավլը կտախտից,
Որ չկորլի աղճգա հետքից:
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Անուշ մերիգ, անուշ մերիգ:

Ծեմգլից, չեմգլից, տու մը՛ ժաժը,
Մ'ս իմ ժաժալու,
Հա՛մ ժաժալու, հա՛մ էրտալու,
Հա՛մ իլալու, հա՛մ էրտալու:
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Անուշ մերիգ, անուշ մերիգ:

Թակվոր էգավ արևելքեն,
Գառնուգն էգավ Վանա ծովեն,
Հարսին՝ տարան Մեղրագետեն:
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Մերիգ, մերիգ, մերիգ, մերիգ,
Անուշ մերիգ, անուշ մերիգ:

## 11 (91). ՄԱԳՐ, ՄԱԳՐ

Հը՛յ մա՛գր, մա՛գր, մա՛գր,
Ռուկէ մա՛գր, մա՛գր:
Հը՛յ քաքի՛գ, քաքի՛գ, քաքի՛գ,
Տու հանը սանդխի շարից:

Հը՛յ մամի՛գ, մամի՛գ, մամի՛գ,
Հըլալ ը կիս գարկիր:

Հը՛յ, ախպե՛ր, ախպե՛ր, ախպե՛ր,
Հըլալ ը՝ կքու ծեռվա ամագից:

- Դարան թըղ դանուն,
Է՛լմը՝ գու պերին:

## 12 (92). ՈՒՍՏ ԷՆԻՄ ԷՐՈՒՍԱՂԵՄ*
## (ՁԱՄԹԵԼ)

Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

Ուխտ էնիմ Էրուսաղեմ՝
Ջամպախնին Արաքստանը,
Էրսաղվան դախաիվ ավլող՝
Նխշուն էղվնգի նմանը:

Հը՛յրան իմ քու վարբեդին,
Որ բագիկ մը իդաս ընչի,
Ըր տուռ ու դրգեց չիմանը
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,

Ջամթելի ծանդրութենեն
Ջամթել գդրավ, չովն եր ընգավ.
- Խո՛ւրբան իմ քու վարբեդին.
Ջըմ չամն ի չովեն առ հանիս,
Ջըմ կլխու կրկատ գիդամ՝
Ջըմ չամն ի չովեն տու հանի՛ս:

- Լողվորաի վարբեդն յըս իմ՝
Ջամթելն ի չովեն չը՛մ հանի,
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանա՛յ, նա՛ր նանանա՛յ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Ջըմ ջալյաի մախճան գիդամ՝
Ջըմ չամն ի չովեն տու հանիս,
- Լողվորտի վարբեդն յըս իմ՝
Ջամթելն ի չովեն չը՛մ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Ջըմ քթի խկման գիդամ՝
Ջամթելն ի չովեն առ հանիս:
- Լողվորաի վարբեդն յըս իմ՝
Ջամթելն ի չովեն չը՛մ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Ջըմ վկի վկնոց գիդամ՝
Ջամթելն ի չովեն առ հանիս:
- Լողվորաի վարբեդն յըս իմ՝
Ջամթելն ի չովեն չը՛մ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,

* *Հարսանեկան ծառը հայրենի գյուղում՝ Նամակերտում կոչվում էր «Նռներով ծաղկազարդ» (Ծան. բանասացի):*

* *Ծիսերգին բնորոշ է տրամախոսական կառուցվածքը և տողակրկնությունը, տե՛ս նոտագրությունը (Ծան. կազմողի):*

Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Զըմ թևի քլաղուկ գիդամ՝
Զըմ չամն ի չովեն տու հանիս:
- Լողվորտի վարբեդն յըս իմ՝
Ցամթելն ի չովեն չը՛մ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Զըմ միճվու քըմըր գիդամ՝
Զըմ չամն ի չովեն տու հանիս:
- Լողվորտի վարբեդն յըս իմ՝
Ցամթելն ի չովեն չըմ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Զըմ բոգու բոխախ գիդամ՝
Ցամթելն ի չովեն տու հանիս:
- Լողվորտի վարբեդն յըս իմ՝
Ցամթելն ի չովեն չըմ հանի:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Զըմ միճվու խունջան գիդամ՝
Ցամթելն ի չովեն տու հանիս
- Թը միճվուդ խունջան գիդաս՝
Ցամթելն ի չովեն գհանիմ:
Ջանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Մաղներ տի՝ մումեղեն,
Ղնգներ տի՝ սըդըֆ նմանը,
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանա՛յ,
Ընկներ տի՝ խալմով քըշին,
Աճկեր տի՝ գանտեխ նման ը:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

- Քու բաժ ու բաժեխն ըսիմ,
Բաժիգ տի՝ պարդի նման ը,
Ջանանա՛յ, նա՛ր նանանա՛յ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:
Քու թն ու թիգունք ըսիմ,
Թևիգ տի՝ պերտազ նման ը:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,

Ուխտ էնիմ Էրուսաղեմ,
Զամպախնին Արաբստանը:
Հանանա՛յ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ,
Ջանանայ, նա՛ր նանանայ,
Նա՛ր, նանի՛գ, նանի՛գ, նանանայ:

## 13 (93). ԿԱՑԷՔ ԴԵՍԷՔ

Կացեք, դեսեք ի՞նճն է գերի կթուպ,
Կացին, դեսան՝ էչն էր գերի կթուպ.
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քըլ բըդի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի վէչ,
Կացին, դեսան՝ կեւն էր գերի վէչ.
Կեւն էր իչուն,
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քըլ բարի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի վկել,
Կացին, դեսան՝ թուրն էր գերի վկել.
Թուրն էր կիլուն,
Կեւն էր իչուն,
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն՝
Իկուն, դիրուն,
Քըլ բարի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի կթուր,
Կացին, դեսան՝ ժանգն էր գերի կթուր.
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կեւն էր իչուն,
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քըլ բարի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի ժանգ.
Կացին, դեսան՝ յըղն էր գերի ժանգ,
Յըղն էր ժանգին,
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կեւն էր իչուն,
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քըլ բարի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի վյըղ,
Կացին, դեսան՝ իսան էր գերի վյըղ.
Իսան յըղին,
Յըղն էր ժանգին,
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կեւն էր իչուն,
Էչն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քըլ բարի, քըլ բարի, քըլ բարի, քը՛լ:
Կացեք, դեսեք ի՞նճն է գերի իսան,
Կացին, դեսան՝ հուղն էր գերի իսան.

Հուղն էր իսնին
Իսան՝ յըղին
Յըղն էր ժանգին
Ժանգն էր թրին,
Թուրն էր կիլուն,
Կեյն էր լյուն,
Էյն էր թպին,
Թուպն էր իկուն,
Իկուն, դիրուն,
Քու բարի, կու բարի, կու բարի, կո՛ւ:

## 14 (94). ՀԱՅՆԻԳ ՆԻՆԱՐԷ ՆԻՆԱՐ

Մ'խ նինար, ջա'ն նինար,
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:
Վըր չթոնա վիդը պար,
Օղներ կողրի, քիսնա` քար:
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:
Սարույ լինա էգա յաչ,
Կգա վերցի թաժա հայ,
Անտրու շուն կիս լի խաչ:
Ընչի լի՞նճ խաչել պիդեր,
Ընչի ճար ու վար պիդեր:
Մ'խ նինար, ջա'ն նինար,
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:
Վըր չթոնա վիդը պար,
Օղներ կողրի, քիսնա` քար.
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:
Գինի, գինի, գինստան,
Քուրիգմ' ունիմ շարստան,
Մանդր հիվի շարող է,
Նխշուն շաքգի կարող է:
Մ'խ նինար, ջա'ն նինար,
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար,
Վըր չթոնա վիդը պար,
Օղներ կողրի, քիսնա քար:
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:
Նարին, նարին էգեր ը,
Ծարէ շաքիկ հակեր ը,
- Նարի'ն, նարի'ն, լի՞նճ գուլիս.
- Կտան կովույ եղ գուլիմ,
Չալ հավույ` հավգիտ գուլիմ,
Էրգնքույ` ամբեր գուլիմ,
Ամբերույ` անցրն գուլիմ,
Վըր սըր ուլած տա մկի`
Անցրն լինա վըր ծկի:
Մ'խ նինար, ջա'ն նինար,
Հայնիգ նինարէ, նինար,
Վըր չթոնա վիդը պար,
Օղներ կողրի, քիսնա քար
Հայնիգ նինարէ, նինար,
Ջայնիգ նինարէ, նինար:

## 15 (95). ՋԱՆ ԳՈՒԼՈՒՄ

Տանուտեր կնայ բակար,
Ջան, գուլում ջան, ջան,
Ոճխարն է արէ հակար,
Ջան վլինճա'կ ջան, ջան:

Տանդգի', մեր փայը տո'ւ,
Ջան , գուլում ջան, ջան,
Տանդ չդիպի նակար,
Ջան վլինճա'կ ջան, ջան:

Վիջագ տրին վըր իշուն
Ջան, գուլում ջան, ջան,
Փստայ ընգավ մըճ տլին,
Ջան վլինճա'կ ջան, ջան:

Տղեկներ կային չլի,
Ջան գուլում ջան, ջան,
Ախճիգներ կային խլի,
Ջան վլինճա'կ ջան, ջան:

## 16 (96). ԽՈՐՈԴԻԳ
### 1

Խորոդիգ նակերով, խորոդիգ սոլերով,
Խորոդիգ մակերով, սակերով:
Ծուդ-շուդ մի քելէ, խորոդի'գ,
Մաշի քու սոլիգ, խորոդի'գ,
Գմնաս պոբիգ, խորոդի'գ,
Փուշ չընի տոդիգ, խորոդի'գ:
Քու խատրի համար` խորոդի'գ,
Կիշեր տուրս էլա, խորոդի'գ,
Լուսնագ Բիթլիսու գիկա,
Վըր Մշու սարուն գիկա,
Վըր Սասմա սարուն գիկա,
Վըր ուխաի ջամպուն գիկա,
Խորոդգի ջամպուն գիկա:
Խորոդի'գ, քու ուխտի խատրին, խորոդի'գ,
Բակ մը լդաս տու լուսնգին,
Բակ մը չդաս` առ լուսնգին,
Գյոիմ, գէրաամ գընգնիմ քըրերուն,
Գէրտամ գընգնիմ ճրերուն,
Գէրտամ գընգնիմ չոլերուն,
Գէրտամ գընգնիմ սարերուն,
Խորոդիգ մակերով, խորոդիգ սոլերով:

## 17 (97). ԽՈՐՈԴԻԳ
### 2

Խորոդիգ նակերով, խորոդիգ սակերով
Ծուդ շուդ մ'քելէ, խորոդի'գ,
Գմաշի սոլիգ, խորոդի'գ,
Գմաշի սոլիգ, խորոդի'գ,
Գմնաս պոբիգ, խորոդի'գ,
Գյավը սրդիգս ի մոդիգ:
Խորոդիգ նակերով, խորոդիգ սակերով:
Կիշրիգ խալտը տուրս էլը,

Լուսնագն անուշ գյուլեր:
- Լուսնա՛գ, խորբա՛ն, ո՞ւր գէրտաս,
- Գէրտամ վըր Սասմա սարուն,
- Գէրտաս վըր Սասմա սարուն՝
Պա՛րն դանիս իմ յարուն:
Խորոդիգ նավերով, խորոդիգ սավերով:
Խորո՛դ, քու ատչու սիրուն,
Քակ սը իդաս լուսնգուն,
Քակ մը չիդաս լուսնգուն՝
Գյոիմ, գէրտամ գընգնիմ չոլերուն,
Գէրտամ գընգնիմ սարերուն,
Գէրտամ գընգնիմ քարերուն,
Խորոդիգ նավերով, խորոդիգ սավերով:
Շուդ շուդ մ'քելէ, խորոդիգ,
Գմաշի սոլիգ, խորոդիգ,
Գմաշի սոլիգ, խորոդիգ,
Գմնաս պոքիգ, խորոդիգ,
Գցավը սրդիգս ի մոդիգ:
Խորոդիգ նավերով, խորոդիգ սավերով:

## 18 (98). ԽՈՐՈԴԻԳ, ՀԱՅ, ԽՈՐՈԴԻԳ

### 1

Ջամ իս թորգի էրա՛ն, էրա՛ն,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Պոլոր էրիս, բգդիգ պերան,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Տու գայներ իս դարգաhի տուռ,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Մեճկ տի նման՝ խընջըրի բուռ,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Քու ծամ քըշած Սասմա ծովեն,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Գշնգշնգը առվի կովեն,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Աշուն էգավ, էլա կայի,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Խորոդ տուն չէր՝ նստա լայի,
Խորուդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Տու խորոդ իս, քանց մանուշագ,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Իկամ ծըր դուն՝ տառնամ մշագ,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Տու էներ իս հալա-հուլա,
Խորոդիգ, հա՛յ խորոդիգ,
Քու տղիգներ՝ ամբի քուլա,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:

## 19 (99). ՀԱ՛ ՇՈՐՈՐԱ, ՄԱՆՐԱՏՈՏԻԿ

### 2

Ջամ իս թորգի էրա՛ն, էրա՛ն,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ,
Պոլուր էրիս բգդիգ պերան,
Խորոդիգ, ջան խորոդիգ,
Գնմանի՝ ժամդան խորան,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ,
Ծոցդ ի նման սադմոսարան:
Խորոդիգ ջան, խորոդիգ,
Հա՛ շորորա, մանրատոտիկ,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Խորոդն էլի գէրտեր ի ժախ,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ,
Ջիմ խեղճ սրդիգ՝ ծամերուց կախ:
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ,
Հա՛ շորորա, մանրատոտիկ,
Խորոդիգ, ջա՛ն, խորոդիգ:
Խորոդ գայնէ դարգաhի դուռ,
Խորոդիգ, ջան, խորոդիգ,
Մեճկն էր նման՝ խըսօըրի բուռ,
Խորոդիգ ջան, խորոդիգ:

## 20 (100). ԽՈՐՈԴԻԳ

### 3

Մշու սարեր մշուշ ը.
Ցաղգեր ը կարուն, լցվեր ը առուն,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Իմ յար կըց քում անուշ ը,
Իծեր ը շաղիգ, պածվեր ը ծաղիգ,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Ուսաե՞ն գիկաս Խասկեղու,
Պածվեր ը ծաղիգ, տաոյեր ը տաղիգ,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Գշորորաս կըց մեղու,
Խորոդ ին արդեր, խորոդ ին դարդեր,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Առաքելոց ըխտավոր,
Կանաչ ին արդեր, կանաչ ին սոլեր,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:
Էրտանք մըր չոլեր,
Նխշիմ վքու սոլեր,
Խորոդիգ, հա՛յ, խորոդիգ:

## 21 (101). ԳԱՅՆԻՐ, ԽՈՐՈԴ

### 1

Սասնու սարեր մըճ ամբերուն գլոդեն,
Ցարոճ թշեր՝ կըց տրեգակ գշողեն,
Էլի՛, յարո, էրտանք մըր Սասնու չոլեր,
Բուրմունքն անուշ՝ արեգակէն գցողեր:
Գայնի՛ր անուշ, գայնի՛ր խորոդ, գայնի՛ր, գամ,
Էրտանք Սասնու սարերուն մենք դեսության:
Սասուն գէրտանք, մենք օրերով գմնանք,
Ցարոճ սրդիգ՝ խոսքով գըսինք, գիովնանք:
Գայնի՛ր խորոդ, գայնի՛ր անուշ, գայնի՛ր գամ,
Էրտանք Սասնու չոլերուն մենք դեսության:
Սասնու գէլեն էրգու հարս,
Մդաց են կեղ գլոդեն,
Գայնի՛ր խորոդ, գայնի՛ր սիրուն, գայնի՛ր գամ,
Ելաց են տուրս գտոդեն,
Գայնիր խորոդ, գայնիր սիրուն, գայնիր գամ,
Սըդըֆի բես՝ գշողեն,
Գայնի՛ր խորոդ, գայնի՛ր սիրուն, գայնի՛ր գամ:

## 22 (102). ԳԱՅՆԻ՛ ԽՈՐՈՂ
## 2

Գայնի՛ խորող, գայնի երտանք, անուշ ջան,
Գայնի՛ խորող, շիմշադ բոյիդ յըս հեյրան,
Գայնի՛ երտանք Մշու սարերը սեյրան:
Մշու սարեր մըճ ամբերուն գլողեն,
Խորող ախճիգ՝ կըց արեգակ գշողեր,
Յարոճ սրդիգ՝ մըճ գարողին գտողեր:
Գայնի՛ խորող, աշխարհ, էրգիր գաղաճեմ,
Գայնի՛ անուշ, ռակիգմ' առնիմ քու շնչեն,
Գայնի՛ խորող, խսմատ էնը սև աճեն:
Գայնի՛ խորող, գայնի երտանք, անուշ ջան,
Գայնի՛ խորող, շիմշադ բոյիդ յըս հեյրան,
Գայնի՛ երտանք Մշու սարերը սեյրան:

## 23 (103). ՔՈՒ ԽՈՐՈՂԻԳ ՅԱՐ*

Քու խորողիգ յար, բախչեն բարգեր էր,
Ռամին վարգեր էր, ջոյվին պայվեր էր:
Ցոյվնու շողքից՝ լուսնագ խամրեր էր,
Յարուգ դեսեր էր, հոկին՝ քաղվեր էր:
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար,
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար:
Յարոճ էրսնուց բակ մի քարեր էր,
Գունգ կեղոց-կեղ՝ վխըքար դարեր էր:
Յարոճ ախպեր լէ վխընջալ վերցեր էր,
Ընցնող յարոճ սիրդ՝ խարունգ վարգեր էր,
Մոլորված յար լէ, սարեր ընգեր էր,
Պարծրիգ քարերուց, գլինք ծոր թալեր էր:
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար,
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար:
Խորունգ ծորու մեճ՝ ախպուր տարծեր էր,
Ուր ծառավ յարոճ հո՛ւը զսպասեր:
Աշնան գունգ լէ, դեսէ, լածեր էր,
Էրգսի մուրազ՝ գլխաղ մածեր էր:
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար,
Էրգսի մուրազ՝ գլխաղ մածեր էր:
Վայ նանար, նանար, վայ նանար, նանար,
Էրգսի մուրազ գլխաղ մածեր էր:

## 24 (104). ՄՇՈՒ ՀԱՐՍՆԵՐ

Մշու հարսներ ջուխտէ-ջուխտ,
Նար, հո՛յ նար, անուշ յար,
Սրբը Աղպերից կային ուխտ,
Ջան, հո՛յ ջան, անուշ ջան:

Լուսնագ ծագին գյոլեր,
Նար, հո՛յ նար, անուշ յար,
Թուխ ամր՝ էրգնուց գշողեր,
Ջան, հո՛յ ջան, անուշ ջան:

- Լուսնա՛գ, խուրբա՛ն, մ՛շողա,
Նար, հո՛յ նար, անուշ յար,
Մշու հարսնե՛ր թըղ շողան,
Ջան, հո՛յ ջան, անուշ ջան:

Ուրանց վուգս ու վարտերուց՝
Նար, հո՛յ նար, անուշ յար,
Թուփ ու տերև գտողան:
Ջան, հո՛յ ջան, անուշ ջան:

## 25 (105). Գ'ՔԵԼԵՐ

Հե՞յ, գ'քելեր, գ'քելեր,
Գ'քելեր, հա՞յ, գ'քելեր,
Գ'քելեր ջան, գ'քելեր:

Ծամերն էր՝ ոսկի թելեր,
Էրեսն էր՝ լուսնագ պոլոր,
Աճկերն էր՝ բըլըք բիլոռ,
Ընքերն էր՝ կամար ու կեռ,
Քթիգն էր՝ սուլթան սիսեռ:
Գ'քելեր, հա՞յ, գ'քելեր,
Սասնա խորոդիգ կաքվուգ,
Մանդրիգ տողերուց մեռնիմ:

Հե՞յ, գ'քելեր, գ'քելեր,
Գ'քելեր, հա՞յ, գ'քելեր,
Գ'քելեր ջան, գ'քելնր:

Լեզուն էր՝ բլբուլն ի խաղ,
Թշերն էր՝ խնձորն ի շաղ,
Ադմներ՝ սըդըֆի շար,
Բոզունքն էր՝ պարագ ի լար,
Բոյ բուսաթ բարդին ի փելք,
Ծորորն էր՝ կյաքավի քելք:
Գ'քելեր, հա՞յ գ'քելեր,
Սասնա խորոդիգ կաքվուգ,
Մանդրիգ տոդերուդ մեռնիմ:

Հե՞յ, գ'քելեր, գ'քելեր,
Գ'քելեր, հա՞յ, գ'քելեր,
Գ'քելեր ջան, գ'քելեր:

Նխշուն միկարով ախճիգ,
Քու կին հըկարով ախճիգ,
Գայներ իս ախպրի ազան,
Քու շող՝ դեմ արեգական:
Հըկա՛ր էրնեգ քու դիրուն,
Վառվուգ իմ յըս քու սիրուն,
Սասնա խորոդիգ կաքվուգ:

## 26 (106). ՎԱՐԴ Ի ԲԼԲՈՒԼ

Ախճի՛, քու ասու սիրուն,
Չէնիս վիսի էրերուն,
Թալիս էդն սարերուն,
Ընգնամ մեծ-մեծ քարերուն:
Վարդ ի բլբուլ, վարդը ջան,
Վարդ խռովավ, կնաց Վան:
Ձուն էր էգի սարերուն,
Հալավ թափավ քարերուն,

* Հորինող-կատարող՝ Ֆուրման Մարգարյան, Թալինի Աշնակ գյուղից, ղեկավարում է գյուղի ազգագրական երգի-պարի համույթը:

Կուժն էր յարոճ ծեռներուն,
Պերեկ մողիգ ճրերուն:
Վարդ ի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խռովավ, կնայ Վան:
Լցեց կուժն ի կարմրուս,
Վերուց տրեց փիջերուն,
Թափավ շեգիգ ծամերուն,
Իճավ խորոդ դոշերուն:
Վարդ ի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խռովավ, կնայ Վան:
Այ կաքվո՛ւզ, մըճ քարերուն,
Լուս գիդաս տու աստղերուն,
Հա՛ էրերուն, էրերուն,
Ծուռ գիկամ ծեր տըներուն:
Վարդ ի բլբուլ, վարդի ջան,
Վարդ խռովավ, կնայ Վան:

## 27 (107). ՄԱՐՈ

Արի՛ Մարո, արի՛, արի՛,
Արի՛ ջանօ, արի՛, արի՛,
Մարոն շադ խորոդ էր,
Հայլին ի՞նճ գէներ,
Մումէ մաղներ ուներ
Սադնիք ի՞նճ գէներ:
Չէ՛, Մարո ջան, չէ՛,
Չէ՛, յարո ջան, չէ՛,
Չէ՛, անուշ ջան, չէ՛,
Արի՛ Մարո, արի՛, արի՛,
Արի՛ ջանօ, արի՛, արի՛:

Մարոն սարեն գիկեր,
Ուր շալգին էր՝ ժախ,
Մարո ծամեր հուսո՜ւզ, հուսո՜ւզ,
Ուր փիջերուց կախ:
Չէ՛, Մարո ջան, չէ՛,
Չէ՛, յարո ջան, չէ՛,
Չէ՛, անուշ ջան, չէ՛,
Արի՛ Մարո, արի՛, արի՛,
Արի՛ ջանօ, արի՛, արի՛:

Մարոն սարեն գիկեր,
Ծամերուն՝ շուշան,
Կեռի չորս պոլոր յէ՝
Զինավոր խուժան:
Չէ՛, Մարո ջան, չէ՛,
Չէ՛, յարո ջան, չէ՛,
Չէ՛, անուշ ջան, չէ՛,
Արի՛ Մարո, արի՛, արի՛,
Արի՛ ջանօ, արի՛, արի՛:

Ցըմա՜ն, էրգինքն էր ամբ,
Ցըմա՜ն, կեդին էր թաց,
Խորոդ Մարոն ընգուզ կեդին՝
Ուր ծոցիկ յէ՝ բաց:
Չէ՛, Մառո ջան, չէ՛,
Չէ՛, յարո ջան, չէ՛,
Չէ՛, անուշ ջան, չէ՛,
Արի՛ Մարո, արի՛, արի՛,
Արի՛ ջանօ, արի՛, արի՛:

Զուատ մէ կռուսգ էգան,
Աշմու սարերուց,
Անտեր Ֆըլըք՝ ջոկեց
Ջընջի ըմ յարուց:
Չէ՛, Մարո ջան, չէ՛,
Չէ՛, յարո ջան, չէ՛,
Չէ՛, անուշ ջան, չէ՛:

## 28 (108). ԴԵՐԻԿՈ - ՆԻՆԱ

### 1

Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան,
Դերիկոն մեզ էր, ծամեր շեզ էր, Դերիկո ջան,
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան,
Խուլքու քոֆուն՝ նխշուզ պուխ էր, Դերիկո ջան,
Շըմամ դոշիր՝ պոլրուզ էր, Դերիկո ջան,
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան:
Դերիկոն էլէ գէրտեր Վարազ, Դերիկո ջան,
Բաժն էր էրգեն՝ մեճկն էր պարազ, Դերիկո ջան,
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան:
Ուր ուդելիք մեղր ու գարակ, Դերիկո ջան,
Ուր հակնելիքն էր բումբարակ, Դերիկո ջան,
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան:
Պարծր են Մարատկու խաչեր, օյ, Դերիկո ջան,
Խսմատ էնէ քո սև աճեր, Դերիկո ջան:
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան,
Դերիկո հակին՝ խուտնի խումաշ, Դերիկո ջան,
Կայնէ - կէնեն Դերիկոյ թամաշ, Դերիկո ջան,
Դերիկո-Նինա, Դերիկո-Նինա, Դերիկո ջան:
Դերիկո-Նինա, Դնրիկո-Նինա, Դերիկո ջան:

## 29 (109). ԴԵՐԿՈ - ՆԻՆԱ

### 2

Դերկո-Նինա, Նինա, Նինա, Դերկո ջան
Էրուսադեմ ուխտ էնեցի, Դնրկո ջան
Ախճիգ չկեր քզի նման, Դերկո ջան,
Պոլոր էրիս գարջլիզ չանը, Դերկո ջան
Քակմ' դուր կիս, ըր առու ու տրգեց չիմանը,
Դերկո ջան:
Դերկո-Նինա, Նինա, Նինա, Դերկո ջան
Դերկո հակին խաս ու խումաշ, Դերկո ջան,
Աշխար թապի Դերկոյ թամաշ, Դերկո ջան,
Դերկո-Նինա, Նինա, Նինա, Դերկո ջան:

## 30 (110). ԴԵՐԻԿՈ ՀՈՅ ՆԱՐ

### 3

Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, Դերիկո ջան,
Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, խանմէ ջան:
Զուխտագ կուտան տաշտ գպաներ, Դերիկո ջան,
Շեգ ախճիգմ' էր՝ հաց գտաներ, խանմէ ջան,
Ոտքմ' քելեր, մեգ՝ զ'գաներ, Դերիկո ջան,
Աճկով կաներ՝ մարդ գսպաներ, խանմէ ջան:

Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, Դերիկո ջան,
Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, խանմէ ջան:
Դերիկոն էլավ գէրտեր էգին, Դերիկո ջան,
Ինքն էր, իր ջուխտագ դեկերգին, խանմէ ջան:
Աշորորեր մեճ օրտոդին, Դերիկո ջան,
Ով որ դեսներ՝ գէլեր հոկին, խանմէ ջան:
Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, Դերիկո ջան,
Դերիկո հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար, խանմէ ջան:

## 31 (111). ԴԸՐԴՈ
### 1

Դըրդո, Դըրդո, Դըրդո, Դըրդո, Դըրդո, Դըրդո,
Դըրդո՛, տնավե՛ր, կնայի մըր խըլէ մարագ,
Աըլլո խորտնավէ, միջնորդիս անունն էր Գարան,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, տու կայնել ես դեմ ամրոյին,
Աըլլո խորտնավէ, լուսնագ տվէ քու շըմամ ծոյին,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, մեր տուն, ջեր տուն իրար դիմաց,
Աըլլո խորտնավէ, աչքով կանեմ, ընքով՝ իմաց,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, դարդ եմ արէ դոքուր-դոքուր,
Աըլլո խորտնավէ, ես քու դարդեն
Կրվեմ կէրթսւմ Սորգում,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, կեղի սլոլոր մանդր փուշ էր,
Աըլլո խորտնավէ, կեղի մլճլի սիրած՝ շաղ անուշ էր,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, դարդ եմ արէ դոքուր-դոքուր
Տո տնավե՛ր, յըս քո դարդեն,
Կրվեմ կէրթսւմ Սորգում,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:
Դըրդո՛, Լենին էգավ աշխարհ տիրեց,
Աըլլո խորտնավէ, թափր Արդաշ՝ Ռեզոն սիրեց,
Յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն Դըրդո:

## 32 (112). ԴԸՐԴՈ
### 2

Դըրդո՛, արի էրտանք արտն ի բլուր,
Ես էղնիմ հող, տու էղի՝ ճուր:
Ըմա՜ն Դըրդո, Դըրդո, Դըրդո:
Դըրդո՛, արի էրտանք ի վերին թաղ,
Ես էղնիմ թուփ, տու էղի՝ շաղ,
Ըմա՜ն Դըրդո, Դըրդո, Դըրդո:
Դըրդո՛, արի էրտանք սարն ի Բինգոլ,
Ես էղնիմ ջուկ, տու էղի՝ գոլ,
Ըմա՜ն Դըրդո, Դըրդո, Դըրդո:
Դըրդո՛, արի էրտանք սարն ի Սասուն,
Ես էղնիմ ծուխ, տու էղի՝ սուն,
Ըմա՜ն Դըրդո, Դըրդո, Դըրդո:
- Տղա՛ Քուռզիզ ծին իս հեջի,
Հեռու ճամպերն ին մոդեցի,
Տու յեպ գիկաս՝ տանիս ընջի:
Ըմա՜ն Դըրդո, Դըրդո, Դըրդո:

## 33 (113). ՈՒՍՏԸ՞Ն ԳԻԿԵՐ

Ուստե՞ն գիկեր, ուստե՞ն գիկեր,
Ուստե՞ն գիկեր տու Աղասկեղու,
Գշորորեր կըց թարս մեղու,
Քակմ' իդաս՝ դանիմ տեղու:

Ուստե՞ն գիկեր, ուստե՞ն գիկեր,
Ուստե՞ն գիկեր տու Խլաթա,
Գարմիր էրիս, խորսով կատա.
Քակմ' իդաս՝ տամ կոլոտա:

Ուստե՞ն գիկեր, ուստե՞ն գիկեր,
Ուստե՞ն գիկեր Կորվա շաշեն,
Ճաճիգ շարէ խուլքի քոշեն,
Գըժեր կԱութն ու կՔոնաշեն,
Տաշտ լը վրեն՝ չուրի Նորշեն,
Ջուրի հըսնի Մշու վերին քոշես:

## 34 (114). ԱՅ ՍԵՎ, ՍԵՎԱՎՈՐ ՄԱՐԷ

Այ, սև, սև, սևավոր մարէ,
Ես չեմ առնի Վանա խոջեն.
Վանա խոջին խուրբան կանեմ
Իմ Սաքոյի թուխ քոլովին,
Ջարխներին, բըլըք փոստին:
Այ սև, սև, սևավոր մարէ,
Ես չեմ առնի Վանա խոջեն,
Վանա խոջեն ես ի՞նչ կանեմ:

## 35 (115). ՎԱՐԴՆ Ի ԲԱՑՎԷ

Վարդն ի բացվէ Վանա քյաղքի Էգեստան,
Վարդն ի բացվէ Վանա քյաղքի Էգեստան,
Քյա խորոտիկ, քյա սիրունիկ վիրն ես տու,
Աշխարհ գիտէ, ալամ գիտէ՝ յեմն ես տու:

Վարդն ի բացվէ վարդավառի շաղերով,
Իմ յար կգյար, վարդ գքյաղեր մաղերով,
Քյա խորոտիկ, քյա սիրունիկ վիրն ես տու,
Աշխարհ գիտէ, ալամ գիտէ՝ յեմն ես տու:

## 36 (116). ԴԸ ԿՆԸ՝ ԳԻԿԱՄ

Ըղ քամբախ Մանազկերտ, մանդր ու պեղ կեղեր,
Ռակիգ մը իդաս՝ յարոճ լը տեղ էր:
Ըղ քամբախ Մշու տաշտ, հինգ հըրլիր դուն էր,
Գավնդուր տառծը նայի՝ ջնջխկու պուն էր,
Մեգ լը տառծը նայի՝ ջրակ լը սուն էր,
Մեգ լը տառը իշի՝ քուպագ լը դուն էր:
Ջգբիս կգժեր, գիմնան ճժեր,
Ջգբիս մսուր, գիմնը կիսուր,
Ջգբիս փետագ՝ գիմնը քոպագ:
Դը կնը գիկամ, դը կնը՝ գիկամ,
Գարմիր սոլիր հակնիմ իկամ:
Դը կնը՝ գիկամ, դը կնը՝ գիկամ,
Քնցում վօրոյին լը՝ իկամ:

## 37 (117). ԱՄԲՆ ԷՐ ԷՐԳԻՆՔ

Ամբն էր էրգինք, հովն անուշ,
Յար խորոդից, բաքն անուշ:
Ամբեց էրգինք գլողեր,
Ակաբ ախճից գտողեր,
Կըց նոան հաղ՝ գշողեր:
Աշու սարեր մշուշ էր,
Սկաբ ախճից քնքուշ էր,
Յար խորոդ՝ բակն անուշ էր:
Տռ դղա, դդա, լընգըռի,
Ծաբիկ - շլվար ժընգըռի,
Նխշուն միկար ախճգնիր,
Գանաճ վարուլ՝ հողղնիր,
Մըր կութան՝ ռաջաի տոնիր:
Մշու տաշտ գեր ջուխտագ գեա՝
Մեզ Մուրադ, մեզ Մեղրագետ,
Քաֆր շեգոն՝ տարծավ եղ:

## 38 (118). ՄԸՐ ԴԱՆ ԱՌԱԾ

Մըր դան առաճ ցանուգ էր արդ կարնցան,
Էրգու ջըյրան էգան ու միճով ընցան,
Մեզ ըմ յարն էր, մեզ լը քու յար, ա՜յ ըման,
Ձամիր՝ չով էր, բոյ լը չինար, ջա՜ն ըման:

Յըս չոբան եք, ըմ յար ընչի հաց գպերեր,
Մեղր ու գարակ, մեզ լը արտար սիր գպերեր,
Տու հնչվոր էր, քու յար քըվնը գփախներ,
Աստվաչ ըմալ յարի հոկին՝ թը՛խ առներ:

## 39 (119). ՎԻՇԱՊՆ ԷՐ ԻԾԻ

Վիշապն էր իճի Բաշկեղու յայլեն, օյ, օյ,
Լևոնին կըրգիր ը չալղալու քարեն, օյ, օյ,
Լևոն ջան, փախի՛ր, կյանքդ ապատիր, օյ, օյ,
Տիրունը քաղում է չոլի մանդակը, օյ, օյ,
Սելով բերեցին Լևոնի ջանդակը, օյ, օյ:

## 40 (120). ՈՂԲ ՍԱԹՈՅԻ

Կոստան աղեն բոստան ցանեց,
Բոստնի բոլոր՝ փշով շարեց,
Սաթոյին խստիվ պատվիրեց,
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Ես Սաթոն ենք Ինջիլվեցի,
Ոչ բարով, բոստան ցանեցի,
Իկուր կյանքս կոհ ավեցի,
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Սաթոն էլավ բոստան աշեց
Ջուխտագ գըլլեն՝ սիրդը խաշեց,
Իկուր կյանքը հալեց, մաշեց
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Սաթոյին խփին գիշերով մութ,
Սաթոյ բերին դրին թաքուտ,
Սաթոյ խփող՝ անխիղճ, անգութ
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Սաթոյ բերեցին ժամու դուռ
Կասչիս ռեսին, էգավ մոդ ուր,
Սաթոն մեռավ՝ շաղ խագ ու ժուռ:
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Մայրի՛գ նստի շաքիկ կարա,
Հայրի՛գ էլի դոխտուր ճարա,
Սաթո դարդին դարման արա:
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:
Բոստան ցանինք վերին արդին,
Դարման անենք Սաթո դարդին,
Չորացել էր հորս բարդին.
Ջուլում էր, մայրի՛գ, կուլում էր:

## 41 (121). ԱԽ. ԱԼԱԳՅԱԶ

Ա՜խ Ալագյազ, ջան Ալագյազ,
Ջուրդ անուշ, օդդ անուշ, Ալագյազ:
Պտց լանջերդ, իկամ գիրկդ Ալագյազ,
Ա՜խ Ալագյազ, ջան Սլագյազ,
Ջուրդ անուշ, օդդ անուշ, Սլագյազ,
Շաղ մարտիկ են էգել անցել, Ալագյազ,
Քեզանից չեն կշտացել, Ալագյազ:
Ա՜խ Ալագյազ, ջան Ալագյազ,
Ջուրդ անուշ, օդդ անուշ, Ալագյազ
Մատաղ լինեմ ես նրան,
Որ լանջերիդ սովոր էր:
Ա՜խ Ալագյազ, ջան Սլագյազ,
Ջուրդ անուշ, օդդ անուշ, Ալագյազ,
Աշուն որ գա, ի՞նչ տխուր ես, Ալագյազ,
Գարուն որ գա, ինչ ուրախ ես, Ալագյազ:
Ա՜խ Ալագյազ, ջան Սլագյազ,
Ջուրդ անուշ, օդա անուշ, Ալագյազ,
Մատաղ լինեմ ես նրան,
Որ լանջերիդ սովոր էր:

## 42 (122). ՏՈ ԿՆԻԳ. ՄԻԼԱ

Տռ՛ կնիգ, մ'իլա, մ՞ըլա, մ'իլա,
Կէրթամ բերիմ թոփմ' է շիլա,
Քանց Շամախու խութնին՝ փիլա:
Տռ՛ կնի՛գ, մ'իլա, մ'իլա, մ'իլա:
- Տռ՛ կնիգ, մ'իլա, մ'անիչէ պիս,
Կէրթամ պերիմ՝ հոխեմ լէ միս,
Գէյնիս ուրախ-ուրախ էպիս:
Քաֆուր կնի՛գ, չանիչիս պիս:
- Այ մարդ, հերի՛ք խաալիս ընչի,
Աչք ունիմ սոխ ու բրնչի,
Մեր աուն չկա եզ, կով ու չի,
Գիլամ, մարդո՛ւգ, մի՛ նախատի:
- Ա՛յ խաբեբա, լեզուդ՝ բլբուլ,
Կողքդ է բռնէ սև ցավ ու կուլ,
Էն օր գուզիմ՝ անգաջդ է խուլ
Գիլամ, մարդո՛ւգ, մի՛ նախատի:
- Տռ՛ կնիգ, էրտանք, փորինք առու,
Մուխաթ կենաս պզդիգ թոռուն,
Տռ՛ կնիգ, մ'իլա, մ'իլա, մ'իլա,
Առանց գինալ՝ մի՛ վլվլա:
- Չիչո՛, հերի՛ք տու անիչիս,
Քթեթ իկա իմ պերաչ միս,

Մնաց աքրել, մայրս ալիս,
Կերթամ խոտհունց՝ կարողնաս վիս:
- Մլքո՛ ջան, արի՛ բարիշինք,
Քու պերած կդորին իշինք,
Կարինք ֆստան, բարով մաշինք,
Դէ կնա Մլքո՛, յըս էլ չիլամ:
Մլքոն, Չիչոն բերին կարին,
Մոխն ու բրինձ էպին բերին,
Կերան-խմին անուշ էրին,
Կենացն էլ խմին՝ Մշիրին:

## 43 (123). ՔԵՌԵՆԳԻ

Դառի էստին, դառի էնտին, քեռենգի,
Ջրակ լուս դուր, քեռուն հուս դուր, քեռենգի:

Մամոն մեռնի, որ իկաս,
Ո՛չ խիվնդնաս, ո՛չ տքաս,
Խարսնկոներ տքտքաս,
Ուխտատներ՝ չորորաս:

Դառի էստին, դառի էնտին, քեռենգի,
Ջրակ լուս դուր, քեռուն հուս դուր, քեռենգի:

Յես ինճ արի, դու արիր,
Խարիր տարվա դարդ արիր,
Ջոռով սավդի տեր արիր:

Դառի էստին, դառի էնտին, քեռենգի,
Ջրակ լուս դուր, քեռուն հուս դուր, քեռենգի:

## 44 (124). ՋՈՒԼՈ

Ջուլոն էլավ հայ գդաներ,
Հը՛մ գքելեր, հը՛մ գ՛գայներ,
Հը՛մ գքելեր, հը՛մ գ՛գայներ,
Հաստ ու պարագ թիլ գմաներ:
Հաստ ու պարագ թիլ գմաներ,
Խային մտրտու՝ բաղանկ զարեր:

## 45 (125). ՀՈՎԻՎ ԻՆՔ

Հովիվ ինք հըդ հըլերուն,
Կայի տիման խղերուն
Մանդրիգ մաշերու սիրուն:
Էլը վըր Հըլբը սարուն,
Գակավ նստի վըր քարուն,
Գիլեր կաշուն ու կկարուն:

## 46 (126). ԷԼԻ ԷՐՏԱՆՔ

Էլի էրտանք Գըըգուռ սար,
Քոշկ մը շինինկ՝ մդնինկ հըսար,
Վըր մեգ իկեր շահ ու խոնդքար,
Գուկը հըրիր, գլյը՝ հըկար,
Քոնե՛ր կքու ւյեր,
Չիաներ վըքկի՝ կլին ու բակար:

## 47 (127). ՔԱՐՎԱՆ ԷԼԱՎ*

Քարվան էլավ Հըլբը սարեն,
Վայ դըլ, վայ դըլ, վայ դըլ,
Քարվան էլավ Հըլբը սարեն,
Ջալըմ, կալըմ, կալըմ:
Հըդ ըդ քարվնին՝ ճորի մէ գար,
Վայ դըլ, վայ դըլ, վայ դըլ,
Հըդ ըդ քարվնին՝ ճորի մէ գար,
Ջալըմ, կալըմ, կալըմ:
Վըր ըդ ճորուն՝ խուտիգ մէ գար,
Վայ դըլ, վայ դըլ, վայ դըլ,
Վըր ըդ ճորուն՝ խուտիգ մէ գար,
Ջալըմ, կալըմ, կալըմ:
Մըջ ըդ խուտուն՝ ախճիգ մէ գար,
Վայ դըլ, վայ դըլ, վայ դըլ,
Մըջ ըդ խուտուն՝ ախճիգ մէ գար,
Ջալըմ, կալըմ, կալըմ:
Ախճգա անուն՝ Ալթուն խաթուն,
Վայ դըլ, վայ դըլ, վա՜յ, վա՜յ:
Ախճգա անուն՝ Ալթուն խաթուն,
Ջալըմ, կալըմ, կալըմ:
Պռնիմ ուր թև դանում մըր դուն,
Վայ դըլ, վայ դըլ, վայ դըլ,
Պռնիմ ուր թև դանում մըր դուն,
Ջալըմ, կալըմ, կալըմ:

## 48 (128). ՀՈՎԱՍԱՐԵՐ

### 1

Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն անուշ:

Հովասարեր, Հովասար,
Կայիք Մարատկու սարեր,
Սարու շըկեր՝ գոդրդան,
Հովասարեր, հովն անուշ:
Մեգ արեկագ՝ էրգու շող,
Պռնը բակը՝ էմլը թող,
Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն անուշ:

Լուսնագ ըդ սարուն օլոր,
Հը՛մ խորոդիգ, հը՛մ պլոր,
Հովասարեր, հովն անուշ:
Դղեն գայնի գարմնջին,
Գայնի գմեկը կոքնջին,
Ախճիգ իդեր գըդրճին,
Հովասարեր, հովն անուշ:

Երգու ախպեր լէ գդրիճ
Մեգ քարտաշ էր, մեգ՝ տարպին,
Հովասարեր, հովն անուշ:
Դարեկ դվեկ օսկերչին,

---

* Երգահատված՝ միջնադարյան «Յովհաննես և Աշայ» սիրավեպից, որը տարբեր կրկնակներով, կատարում են իբրև պարերգ: Բանասաց Սանասար Հարոյանը երգը լսել է հորից: Պարերգին բնորոշ է տողակրկնությունը (Ծան. կազմողի):

Ծինէ Էրգու աբրջան,
Տրիք մըր յարոճ նշան,
Մեզ յարոճ, մեզ՝ ուր քուրոճ,
Հովասարեր, հովն անուշ:

Ցերեգ գորրեք կմըր օրոյ,
Կիշեր՝ գէնեք կիրգ ու յոյ,
Հովասարեր, հովն անուշ:
Մըրի ծեռվիս ուր վկնոյ,
Գդրավ ու թափավ ուր յոյ,
Եղավ ընչի դըրդ ու խոյ:
Հովասարեր, հովն անուշ:

Պարծր Մարատկու սարեր,
Էրգիր, աշխարհ գաղաճեր,
Խսմատ Էնեն սև աճեր,

Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն անուշ:

## 49 (129). ՀՈՎԱՍԱՐԵՐ, ՀՈՎՆ ԱՆՈՒՇ
## 2

Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն՝ անուշ:
Առավոդ պարի լուսուն, հովն անուշ
Ցըս գարոդ իմ քու դիսուն, բակն անուշ:
Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն՝ անուշ:
Լուսնագ էդ սարուն օլոր, հովն անուշ,
Հը՛մ խորոդիգ, հը՛մ բոլոր, բակն՝ անուշ,
Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն՝ անուշ:
Ախճի, քու աստու խատեր, հովն անուշ
Չէնիս կնչի դըրդին դեր, բակն անուշ:
Հովասարեր, հովն անուշ,
Ցար խորոդիգ, բակն՝ անուշ:

## 50 (130). ՄԱՆԴՐ ԱՆՁՐԵՎ

Մանդր անյրն, մանդր անյրն,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Սասնու կեղեն ջուխտմ' է հարս, մանդր անյրն,
Մդեր են կեղ զլողեն, թուխ ամբեր,
Էլեր են ափ՝ զաողեն, մանդր անյրն,
Քանց նոան հաղ՝ գշողեն,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Մանդր անյրն, մանդր անյրն,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Մեգին, գըսեն՝ իրցու հարս, մանդր անյրն,
Ընդոր վկից՝ օսկին կախ, թուխ ամբեր,
Քաղեր էր օղին ու ժախ, մանդր անյրն,
Իմ սիրդ՝ ուր ծամերուց կախ, .
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Մանդր անյրն, մանդր անյրն,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Մեգին, գըսեն՝ ռեսի հարս, մանդր անյրե,
Ընդոր հակին խուտնի խաս, թուխ ամբեր,
Գշորոըեր կըց մեղու, մանդր անյրն
Քակմ' իղեր՝ դանենք տեղու,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

Մանդր անյրն, մանդր անյրն,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Մանդր անյրն, թուխ-թուխ ամբեր,
Հարավ քամին՝ մըր Ծամբեր:

## 51 (131). ՎԱՐՏԵՎՐԻ ԷՐԳՈՒՇԱՔԹԻՆ
## 1

Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նայ - նըր,
նա՛յ:
Վարտևրի Էրգուշաքթին,
Գռվան Էրգու դեկերգին,
Սըբիք վըր բուդգի քերչին,
Թաթխան իրարու հոր դին:
Վերջին կփոչխ, կերնդին,
Ընգան հըղ ծուրու ափին,
Ծորեցին, ծորթպեցին,
Մանդրի՛գ - մանդրի՛գ խորմեցին,
Սելիգ չէղավ գրեցին,
Ռեսի սելով գրեցին,
Խարկան չէղավ բշեցին,
Սև օծ՝ խարկան էրեցին,
Ջնջուդ հողաղ տրեցին:
Ցարոճ տունով ընցուցին.
Ցար քնուգ էր՝ չիմցուցին,
Քնուգ էր, քրդնուգ էր,
Հանի փեծգիր՝ սըրչի:
Ցարոճ տոներ զիսապայ,
Մըը զատնեք թաժը հայ,
Քաֆր թուլան պիս խայայ:
Ընչի ի՞նճ բետկ էր շան խայուգ,
Ընչի բետկ էր՝ կիրգ ու յոյ:
Կիշեր գենեք կիրգ ու յոյ,
Ցերեգ, գորրենք կուր օրոյ:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Հա՛յ - նըր, նա՛յ, ջա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նայ - նըր, նա՛յ:
Հովիվ ինք հըղ հլերուն,
Կայի տիման խղերուն,

Մանդրիգ հարսներու սիրուն,
Էչ մը դանուն` վղան է,
Մյուսկ մը դանուն` գղան է,
Շիշագ դար, հա՛յ, շիշագ դար,
Պասվէրգսեն` էվել դար:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Հա՛յ - նըր, նա՛յ, ջա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նայ - նըր, նա՛յ:
Ջըրգու կգովնդ դարի գես,
Քու սերն էր թասլէ վըրես,
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ:
Ուշիգ քելը` մ'հեվը,
Յավաշ քելը` մ'հե՛վը,
Սալդատի շարքի ղըը,
Նագան զողքից` գէրևը:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Ջա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ:
Էլը վըր Հըլբը սարուն`
Ըլբուլ նստավ վըր քարուն,
Կըլլեր կաշուն ու վկարուն
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Հա՛յ - նըր, նա՛յ, ջա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նայ - նըր, նա՛յ:
Ուստե՞ն վիկաս Խասկեղու,
Գթասմեր կըց մեղու:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ,
Ջա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նայ - նըր, նա՛յ:

## 52 (132). ԾՈՒՐՆ ԷՐ ԷԼԻ ՎԸՐ ԷՐՏԻՆ
## 2

Ծուրն էր էլի վըր էրտին,
Վարտերի էրգուշաքթին,
Ըլբուլ նստէ` վըր վարտին:
Վարտերի էրգուշաքթին`
Թաթխան էրգու դեկերգին,
Թաթխան իրարու հոր դին,
Սարիք վըր բուրգի քերքին:
Վերցին կփոցխ ու կերնդին,
Ընգան իղդ կեդու ափին,
Քաղեցին` թամամեցին,
Մանդրիգ - մանդրիգ խորմեցին,
Սելից չէղավ գրեցին,
Փեսի սելից պերեցին,
Յարոճ տոնեն ընցցին,
Յար քնուց էր` չիմցցին,
Փեճգիր կոդուց բըրցցին,
Յարոճ քրդինկ սրպեցին:
Վարտերի էրգուշաքթին`
Ծուրն էր էլի վըր էրտիս,
Ըլբուլ նստէ վըր վարտին:

## 53 (133). ՎԱՐՏԵՎԻՐԻ ԷՐԳՈՒՇԱԲԹԻՆ
## 3

Վարտերի էրգուշաքթին`
Գովան էրգու դեկերգին,
Սըքիք` վըր բուրգի քերքին,
Թաթխան իրարու հոր դին:
Վերծին կփոծխ ու կերնդին,
Ընգան իղդ ծորու ափին:
Քաղեցին, քաղթփեցին,
Ծորեցին, ծորթփեցին,
Մանդրիգ-մանդրիգ խորմեցին,
Գեմից չէղավ գաքեցին,
Ուռի ջղով գաքեցին:
Մեճկունք` սելից արեցին,
Հոդաղ չէղավ քշեցին,
Ջնջուղ` հոդաղ տրեցին,
Խարկան չէղավ քշեցին,
Սն օչ` խարկան շինեցին,
Յարի տունով ընցցին,
Յար քնուց էր` չիմծծին:
Յարոճ տուուն էր գիսապալ.
Մդը զուկեք թըժը հալ,
Թռավ թուլեն ընչի խաչ,
Ընչի ի՞նճ խաչել բիդեր,
Ընչի` կիրգ ու չող բիդեր:

## 54 (134). ՊԱԾՎԱՎ ՎԸՐ ՄՇՈՒ ՏԱՇՏԻՆ
## 4

Պածվավ վըր Մշու տաշտին
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Համբարչման էրգուշաքթին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Սռան կփոծխ ու կերնդին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Ընգան իղդ ծորու պռգին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Ծորեցին, ծորթփեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Մանրից - մանրից խորմեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Գեմից չէղավ գաքեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Ծամեր գեմից էնեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Սելից չէղավ պարծեծին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Մեճկունք` սելից էնեցին
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Ջուխտմ' է արոս լծեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ,
Գոունգ հորվոր էնեցին,
Նանա՛յ նա՛յ, նանրա՛յ նա՛յ:
Ջնջուղ` հոդաղ տրեցին,

Նանա՜յ նա՜յ, նանրա՜յ նա՜յ,
Լորդում՝ խարկան էրեցին,
Նանա՜յ նա՜յ, նանրա՜յ նա՜յ,
Դուն պերեցին վըդ խոդիգ*,
Նանա՜յ նա՜յ, նանրա՜յ նա՜յ,
Զըդ կանաչ սել՝ խորոդիգ:
Նանա՜յ նա՜յ, նանրա՜յ նա՜յ:

## 55 (135). ՏԱՅ ՆԱՅ, ՆԱՐԻՆԱ
5

Տայ, նայ, նարինա նայ, նայ,
Նանայ, նանայ, նանայ, նայ,
Գովան էրգու դեկերգին,
Վերծին փույխ ու կերնդին,
Ընգան հըդ ծորու ապին,
Մանդրիգ-մանդրիգ մանդրեծին,
Ցարոճ ծիուն պարծեծին,
Ցարոճ առնով անծուծին,
Ցար քնուգ էր՝ չիմծուծին:
Ցարոճ էրես պածուծին,
Ցարոճ քրդինկ սրպուծին,
Ցարոճ քրդինկ սրպուծին:
Տայ, նայ, նարինա նայ, նայ,
Նանայ, նանայ, նանայ, նայ:

## 56 (136). ՀԱՅ - ՆԸՐ ՆԱՅ
6

Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ:
Գովան էրգու ղեկերգին,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ,
Սըքլիք վըր բուդգի քերքին:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ:
Վերյին կփոծխ ու կկերնդին,
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ,
Ընգւսն հըդ ծորու ափին,
Ծորեյին, ծորթփեյին,
Մանդրիգ խորոմ էնեյին,
Սելիգ չէղավ պերեյին,
Քաոեգ՝ սելիգ էնեյին,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նայ
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ,
Գոունգ՝ պերին լծեյին
Ցարոճ տոնով ընյյին,
Ցար քնուգ էր՝ չիմյյին:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ:
Մդը գուվեք թաժը հայ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ
Էգավ շնիգ ընչի խաչ,
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ:
Ընչիգ ինչ խաչիլ բիդեր,
Ընչի՝ կիրգ ու չոյ բիդեր:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ:
Դղը, դդը, լընգըռի,
Ծլվար - շաքիգ ժընգըռի,
Հերիք ըսծնիս մըր տոսով,
Մըր խորոդիգ հարսն աքով,
Գէրտամ ըսիմ մեչերուն,
Զըրգին քի խընջալ խորուն,
Էլի քու գարմիր արուն,
Գոլի մըճ քու սոլերուն:
Հա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ, նա՛յ - նըր, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ - նըր, նա՛յ:

## 57 (137). ՅԱՐ, ՀԱՅ - ՆԸՐ ՆԱ
7

Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Յա՛ր, հայ - նըր նա՛, հայ - նըր նա՛:
Հըմբարծման էրգուշաբթին,
Գովան էրգու դեկերգին,
Վերյին կփոյխ ու կերնդին,
Ընգան հըդ ծորու ափին,
Ծորեյին, ծորթփեյին,
Մանդրիգ - մանդրիգ խորմեյին:
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Յա՛ր, հայ - նըր նա՛, հայ - նըր նա՛:
Սելիգ չէղավ պարծուծին,
Սրդիգ՝ սելիգ արեյին,
Գեմիգ չէղավ գաքեյին,
Զմսվեր՝ գեմիգ արեյին,
Հոդաղ չէդավ լծեյին,
Ջնջուդ՝ հոդաղ արեյին,
Զքադուգ խողեր պարծուծին,
Ցարոճ տոնով ընյույին,
Ցար քնուգ էր՝ չիմյույին,
Ա՜խ, կուր էրես բակյեյին:
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Յա՛ր, հայ - նըր նա՛, հայ - նըր նա՛:
Էլանք վըր Սասնու սարուն,
Գալյավ նսաէ վըր քարուն,
Գլլեր կաշուն ու կկարուն,
Կարուն էր, էգավ աշուն:
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Հա՛յ - նըր, նա՛, հա՛յ - նըր նա՛,
Յա՛ր, հայ - նըր նա՛, հայ - նըր նա՛:
Յա՛ր, հայ - նըր նա՛, հայ - նըր նա՛:

---

** Վերջին երկու տողը՝ կրկնակի հետ կրկնվում է (տե՛ս Նոտագրությունը):*

## 58 (138). ՀԱՆԸՄ - ՆԱ

8

Հանը՛մ - նա, հանը՛մ - նա, հանը՛մ նանա,
Համբարցման էրգուշաբթին,
Կուվան էրգու դեկերգին,
Կուվան վրր պուդգի քերքին,
Ռրվին իրարու հոր դին:
Վերցին փոյխ ու գերնդին,
Ընգան հըղ ջորու ափին,
Ծորեցին, ծորթփեցին,
Մանդրիգ-մանդրիգ խորմեցին,
Կեմիգ չէղավ՝ կարեցին,
Դոդիգ՝ կեմիգ արեցին.
Սելիգ չէղավ պարծեցին,
Միճկունք՝ սելիգ արեցին,
Յարոճ տունով անցուցին,
Յար քնուգ էր՝ չիմցուցին:
Հանը՛մ - նա, հանը՛մ - նա, հանը՛մ նանա:

## 59 (139). ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԷՐԳՈՒՇԱԲԹԻՆ

9

Հով, հով, հովն ընգավ,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ*:

Համբարցման էրգուշաբթին,
Հով, հով, հովն ընգավ,
Գովան ջուխտագ տեքերգին.
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Սրբիք վրր պուդգի քերքին,
Հով, հով, հովն ընգավ,
Թալխան իրարու հոր դին:
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Վերցին փոյխ ու գերնդին,
Հով, հով, հովն ընգավ,
Ընգան հըղ ծովի ափին,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Ծորեցին, ծորթփեցին,
Հով, հով, հովն ընգավ,
Մանդրիգ-մանդրիգ խորմեցին,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Գեմիգ չէղավ գաբեցին,
Հով, հով, հովն ընգավ,
Ծամթել՝ գեմիկ արեցին,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Սելիգ չէղավ գրեցին,
Հով, հով, հովն ընգավ,
Գոնագ՝ սելիգ արեցին,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Էվնիգ չէղավ լծեցին,
Հով, հով, հովն ընգավ,
Ջուխտագ գոունգ լծեցին,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Հողադ չէղավ քշեցին,
Հով, հով, հովն ընգավ,
Ջնջուղ՝ հողադ տրեցին.
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:
Յարոճ առնով անցկացան,
Հով, հով, հովն ընգավ,
Յար քնուգ էր, չիմացան,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:

Հով, հով, հովն ընգավ,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բրցավ՝ ծովն ընգավ:

## 60 (140). ԳՈՐԱՆԻ

1

Մ՜յ լո, լո, լո, լո վըլը գորանի,
Այ լէ, լէ, լէ, լէ սեջար գորանի:

Ցորեն եք ցանէ լոյ, էլեր էր բարգէ,
Բզդիգ իմ սիրէ լոյ, չըմ խիմշի կարգէ:

Մ՜յ լո, լո, լո, լո վըլը գորանի,
Այ լէ, լէ, լէ, լէ սեջար գորանի:

Մշու տաշա գըսեն օյ, մանդր ու պեդ կեդ էր.
Զըղ վերան գըսեն օյ, տուրան խորրդ էր,
Էրգսնագ մեգ շաբիգ՝ փողըդիգ նեդ էր,
Ծնչիգմ՛ ը շնչէ լոյ, դըրդերուն տեղ էր:

Մ՜յ լո, լո, լո, լո վըլը գորանի,
Այ լէ, լէ, լէ, լէ սեջար գորանի:

Կարուն էր, կարուն էր, էլեր են կեդեր,
Էլեր են կեդեր օյ, պերեր են վխոճեր,
Հակեր են սուլեր օյ, բեխեր են կբոճեր,
Սարեր գօլորդեն՝ կոչանի լոճեր:

Մ՜յ լո, լո, լո, լո վըլը գորանի,
Այ լէ, լէ, լէ, լէ սեջար գորանի:

## 61 (141). ԳՈՐԱՆԻ

2

Ըղ անդեր Մշու տաշա, հինգ հըրուր դուն էր,
Ըղ Մշու Խաս, գըսին, խորրդգու կեդ էր,
Լէ, լէ, լէ, լէ յարմ՛ գորանի,
Գանճի յար, արի յար, խաղանք գորանի:

---

** Եռատող այս կրկնակը՝ կտրվելով «Հով, հով, հովն ընկավ» հիմնական սյսրերգից, մտել է «Համբարձման երկուշաբթին» պարերգային կառույց և իմաստային - անկախ հարակցությամբ՝ կրկնվում է ռիթմական միություններով (Ծան. կազմողի):*

Ռեհան իմ յանի, շաղ անուշ ուր հող,
Ախճիգ մը սիրեր իմ՝ բղդիգ ու խորող,
Գէրտամ խարիբուտեն՝ գմնամ գարող,
Լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի,
Գանճի յար, արի յար, խաղանք գորանի:

Ցորեն իմ յանի, հըդգեր ը հողին,
Շըմամ մը չէղավ՝ խըգեք ըմ յարին,
Լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի,
Գանճի յար, արի յար, խաղանք գորանի:

Քըմըր իմ գաբէ, ուր լենք մէ մադ է,
Ախճիգ մը սիրեր իմ, ջայնամ՝ ախկադ է:
Լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի,
Գանճի յար, արի յար, խաղանք գորանի:

Քըմըր իմ գաբէ ղասնէրգու ջղեն,
Սիրեր իմ, գառնիմ լէ հարուսաի դղեն,
Լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի,
Գանճի յար, արի յար, խաղանք գորանի:

## 62 (142). ԳՈՐԱՆԻ
## 3

Ըղ Անդեր Մշու աաշա, մանդր ու պեղ կեղ էր,
Ուր օան ու ճուր, գըսեն՝ հիվնդին տեղ տեղ էր:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ըղ Անդեր Մշու Խաս խորողիգ կեղ էր,
Ուր օան ու ճուր, գըսեն, հիվնդին տեղ էր:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ռեհան իմ յանէ, շաղ անուշ ուր հող,
Ախճիգ մը սիրեր իմ՝ պարազ ու խորող,
Գէրտամ խարիբուտեն՝ գմնամ գարող:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ցորեն իմ յանէ, լո, վերին արդու հող,
Ախճիգ մը սիրեր իմ, կեն լէ, գըսեն՝ թող:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ցորեն իմ յանէ, լո, էլեր էր բարգէ,
Բղդիգ իմ սիրէ, լո, չըմ խիմշի կարգէ:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ալաշկերա, Մանազկերտ շաղ անուշ տեղ էր,
Ուր օան ու ճուր, գըսեն, հիվնդին տեղ էր:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ըղ Մշու Խաս, գըսեն, խորողգու կեղ էր,
Ըղ Մեղրագետ, գըսեն, հիվնդին տեղ էր:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ցորեն իմ յանէ, լո, հըղ սելի ազան,
Էլեր էր՝ գշողեր աեմ արեգական:
Լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:

## 63 (143). ԳՈՐԱՆԻ
## 4

Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ալաշգերդ, Մանազգերդ տուրան ու խողով,
Ուր օան ու ճուր, գըսին, անուշիգ հողով,
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ցորեն իմ յանէ, լո, վերին արդու հող,
Բղդիգ իմ սիրէ լո, կեն լը գըսին՝ թող:
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Ցորեն իմ յանէ, լո, էլեր է բարգէ,
Ախճիգ մը սիրեր ըմ՝ քնքուշ ու խորող,
Գէրտամ խարիբություն՝ գմաաս գարող:
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Աստվաց անիչեր լո, փիղըմլը կարուն,
Չթողեց շըմամ մը՝ դանեք իմ յարուն:
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:
Մղեր էք էգին՝ խաղող գքաղեք,
Շըմամ չչերով շըքըր գմաղեք:
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի,
Հա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ յարմ' գորանի:

## 64 (144). ԳՈՐԱՆԻ
## 5

Հը՛ր յարէ, յարէ լո, յարմ' գորանի,
Հը՛ր յարէ, յարէ լո, հաստադ գորանի:
Ցորեն իմ յանի, լո, վերի արդու հող,
Յարուգ մը սիրեր իմ, գըսին՝ արի՛ թող:
Աստվաց անիչեր կըմսալ արդու հող,
Յարուգ մը սիրեր իմ, կեն լը գըսին՝ թող:
Ըղ Մշու տաշտ, գըսին, տուրան ու խողով,
Ըղ մանըրիգ ռեհան էլ՝ անուշիգ հողով:
Ըղ Մշու տաշա, գըսին, հինգ հըրիր կեղ էր
Ուր օան ու ճուր, գըսին, հիվնդին՝ տեղ էր,
Ըղ Մշու Խաս, գըսին, խորողիգ կեղ էր,
Ըղ Մեղրակետ, գըսին, հիվնդին տեղ էր:
Ալաշկերա, Մանազկերտ ինչ անուշ տեղ էր
Ծնչիգ մը գշնչի լո, իմ վերքին տեղ էր:
Հը՛ր յարէ, յարէ լո, յարմ' գորանի,
Հը՛ր յարէ, յարէ լո, հաստադ գորանի:

## 65 (145). ԳՈՐԱՆԻ
## 6

Ցորեն իմ յանի հըղ զուռնի ազան,
Էլեր ը՝ գշողը աեմ արեգական,
Այ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ ջան գորանի:
Ըն Սասուն սար, գըսեն՝ հըզար պաղ ախպուր,
Ամենու ճրերուց՝ անուշ էր ուր ճուր:
Այ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ ջան գորանի:
Գապպեն ինճեր ը, քաղչր ին քար ու փուշ,
Քանց սարի գապպեն լը՝ ուր սերն էր անուշ:
Այ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ ջան գորանի:
Ես վիրու ջեյրան ենք վըր Սասուն սարին,
Թվնգով կըրգեցին՝ բրինդար արյուն:
Այ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ ջան գորանի:

## 66 (146). ԳՈՐԱՆԻ
## 7

Հարէ լո, հարէ լո, յարմ' գորանի,
Հարէ լո, հարէ լո Մշու գորանի:
Էղ անդեր Մշու դաշա հինգ հարուր կեղ էր,
Ուր հողն ու ճուր, գըսին, հիվնդին տեղ էր:

Հարէ լո, հարէ լո, յարմ՛ գորանի,
Հարէ լո, հարէ լո, յարմ՛ գորանի:
Ջորեն իմ ցանէ, լո, էլիր ը քարգլի,
Ալդից մը սիրեր իմ, չըմ դմշի թարգի:

Հարէ լո, հարէ լո, յարմ՛ գորանի,
Հարէ լո, հարէ լո, յարմ՛ գորանի:
Յարմ՛ գորանի, յարմ՛ գորանի,
Յարմ՛ գորանի, վա՜յ, վա՜յ, Մշու գորանի:

## 67 (147). ՀԸ՛Յ ՆՈՒԲԱՐ

### 1

Հը՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հը՛յ Նուբար,
Սասնու քըրեր քարուբար, հը՛յ Նուբար,
Ըմ բաժն ու քում բարեմբար, հը՛յ Նուբար:
Նուբար ինճավ խխիարնույ, հը՛յ Նուբար,
Քաղից խխիար լյույ ջուծ, ջա՛ն Նուբար,
Հադ - հադ գլդեր ըր յարուճ, հը՛յ Նուբար,
Մեզ յարուճ, մեզ՝ ուր քուրոճ, ջա՛ն Նուբար:
Սասնու գէլներ պարագ ջուխ, հը՛յ Նուբար,
Գաբից թարգլին, թորգեց՝ բուխ, ջա՛ն Նուբար,
Թորգեց պամբագ՝ կկեց պուրտ, հը՛յ Նուբար,
Թողեց փհային՝ սիրեց քուրտ, թը՛յ Նուբար,
Հը՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հը՛յ Նուբար,
Սասնու քըրեր քարուբար, ջա՛ն Նուբար,
Ըմ բաժն ու քում՝ բարեմբար, թը՛յ Նուբար:
Էլը հեռուն իշեցի, հը՛յ Նուբար,
Սասնու գէլներ պարագ ջուխ, ջա՛ն Նուբար,
Սասնու տոնիր գլսապայց, հը՛յ Նուբար,
Մյը զույեր թաժը հայց, հը՛յ Նուբար,
Ծներ գաննան խաչեխաչ, թը՛յ Նուբար:
Ընչի ինչ խաչել բլդեր, ջա՛ն Նուբար,
Ընչի՝ կլիրգ ու ջոծ բլդեր, թը՛յ Նուբար:
Հը՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հը՛յ Նուբար,
Սասնու քըրեր քարուբար, հը՛յ Նուբար,
Ըմ բաժն ու քում բարեմբար, ջա՛ն Նուբար:

## 68 (148). ՀԱ՛Յ ՆՈՒԲԱՐ

### 2

Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնա սարեր քարուբար, հա՛յ Նուբար,
Նուբար ինճավ խխիարնոց, հա՛յ Նուբար,
Քաղեց խխիար լյրեց ծոց, ջա՛ն հըյրան:
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար.
Ըմ բաժն ու քում բարեմբար, ջան հըյրան:
Սասնու գէլեր պարագ ջուխ, հա՛յ Նուբար,
Յարմ՛ ունեք Բուլանուխ, ջա՛ն հըյրան,
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնա սարեր քարուբար, ջա՛ն հըյրան,
Սասնա գէլեր պարագ ջուխ, հա՛յ Նուբար,
Բիլոռ աճկեր, ընկեր՝ թուխ, ջան հըյրան:
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնու սարեր քարուբար, ջան հըյրան:

## 69(149). ՀԱ՛Յ ՆՈՒԲԱՐ

### 3

Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Ըմ բաժ ու քում բարեսբար, ջա՛ն Նուբար:
Նուբար ինճավ խխիարնոց, հա՛յ Նուբար,
Քաղեց խխիար լյույ ջոց, հա՛յ Նուբար,
Գդրավ ուր վկի վկնոց, հա՛յ Նուբար,
Էղավ ընչի դըրդ ու խոց, հա՛յ Նուբար:
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնու սարեր քարուբար, հա՛յ Նուբար,
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Ըմ բաժն ու քում բարեմբար, հա՛յ Նուբար:
Հերիք անցնես մեր պագով, հա՛յ Նուբար,
Մըր խորոդից հարսն աքով, հա՛յ Նուբար,
Ջըրգլիմ խընջըլ քի խորուն, հա՛յ Նուբար,
Թայլի քու գարմլիր արուն, հա՛յ Նուբար,
Լցվի մըճ քու սոլերուն, հա՛յ Նուբար,
Հայ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնու սարեր քարուբար, հա՛յ Նուբար:
Էլը վըր Հըլբու սարուն, հա՛յ Նուբար,
Բլբուլ նստի վըր քարուն, հա՛յ Նուբար,
Գիլեր վաշուն ու վկարուն, հա՛յ Նուբար:
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնու սարեր քարուբար, հա՛յ Նուբար:
Սասնու գէլեր պարագ ջուխ, հա՛յ Նուբար,
Թողեց փհային՝ սիրեց քուրտ, հա՛յ Նուբար,
Թողեց պամբագ կկեց պուրտ, հա՛յ Նուբար,
Հա՛յ Նուբար, Նուբար, Նուբար, հա՛յ Նուբար,
Սասնու սարեր քարուբար, հա՛յ Նուբար:

## 70 (150). ՀԸ՛Յ ՆՈՒԲԱՐ

### 4

Մխճի՛, էգան կարնան օրիր,
Հը՛յ Նուբար, հը՛յ Նուբար,
Գդրիմ, գարիմ թըժը շորիր,
Թը՛յ Նուբար, թըժը՛ Նուբար:
Սասուն գէլեր պարագ մուխ,
Հը՛յ Նուբար, հը՛յ Նուբար,
Աճկերն էր սև, ընկեր՝ թուխ,
Թը՛յ Նուբար, թըժը՛ Նուբար:

## 71 (151). ՀԱ՛ ՆԻՆԱ, ՆԻՆԱ, ՆԻՆԱ

Սասնու գէլեր պարագ ջուխ,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա յըս ու տու:
Գաբից կողին, թորգից պուխ,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Ես լի՞նճ արի, նեղացար,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Թողիր գողքես հեռեցար:
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Քու խալերը կըց լուսնագ,

Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Քու աճկեր՝ կըց արեգակ:
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Սասնու սարեր մշուշ էր,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Ցարմ՛ ունեք անուշ էր,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Ինճ հարմար ինք՝ յըս ու տու:
Սաղ կեղով հաստատ էղավ,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Ըմ ցավին դեղմ՛ չէղավ:
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Ինճ հարմար՝ ինք յըս ու տու:
Գժվիմ՝ գընգնիմ սարեսար,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա յըս ու տու:
Տաուի ընչի փրգարար:
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա յըս ու տու:
Քու հեր գուպը վքի գարկը,
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Հա՛ Նինա, յըս ու տու:
Խըքար չիս՝ վքի գմորտը:
Հա՛ Նինա, Նինա, Նինա,
Ինճ հարմար ինք՝ յըս ու ատու:

## 72 (152). ՀՈՎ, ՀՈՎ, ՀՈՎՆ ԸՆԳԱՎ

### 1

Հով, հով, հովն ընգավ,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ՝ ճուրն ընգավ:
Սրակն անցա էն կուռը,
Հով, հով, հովն ընգավ,
Քաղեցի Գենջա նուռը,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ, ճուրն ընգավ:
Սարերը սնչոտել են,
Հով, հով, հովն ընգավ,
Ռշխարը բռդոտել է,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ, ճուրն ընգավ:
Կամաց քշեք սելերը,
Հով, հով, հովն ընգավ,
Կաքեմ չուլքուս թելերը,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ, ճուրն ընգավ:
Սարեն իճան ջուխտմ՛ խոչ.
Հով, հով, հովն ընգավ,
Մինը պնչաց, մինը՝ ոչ,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ, ճուրն ընգավ:
Լամպի շուշեն գծնգա,
Հով, հով, հովն ընգավ,
Գլորա՝ ծոցդ ընգա,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բռչավ, ճուրս ըսգավ:

## 73 (153). ՀՈՎ, ՀՈՎ, ՀՈՎՆ ԸՆԳԱՎ

### 2

Հով, հով, հովն ընգավ,
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

Էլի էգավ աշունը,
Հով, հով, հովն ընգավ,
Ախճիգների բաշխումը,
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

Ես ու յարս մէ բոյի,
Հով, հով, հովն ընգավ,
Դուշման մեռնի մեր սոյին,
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

Ման արլի մանիդ մեռնես,
Հով, հով, հովն ընգավ,
Ցարալու ջանիդ մեռնեմ,
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

Դղան, որ մորից չնվի,
Հով, հով, հովն ընգավ,
Փափուզ բահեր՝ չմեռնի,
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

Ախճիգ, որ մորեն գէղնի,
Հով, հով, հովն ընգավ,
Քացով դվեք՝ թո՛ղ մեռնի:
Նախշուն գակավ, սիրուն գակավ,
Ձեռքեն բռչավ, ճուրն ընգավ:

## 74 (154). ՀՈՎ, ՀՈՎ, ՀՈՎՆ ԸՆԳԱՎ

### 3

Սարից իճան ջուխտ ախճիգ,
Հով, հով, հովն ընգավ,
Ջխտի կոկնոցն էր՝ լաստիգ
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բաղավ, ճուրն ընգավ:
Ախճի, ի՞նչ է քո մեղը,
Հով, հով, հովն ընգավ,
Հալեպիր սրդիս եղը,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բաղավ, ճուրն ընգավ:
Գդալը յուղը մեճ էր,
Հով, հով, հովն ընգավ,
Սիրածս՝ գյուղի մեջ էր,
Սիրուն կաքավ, նախշուն կաքավ,

Ձեռքես բաղավ, ճուրն ընգավ:
Սարեր - ջորեր բարութ է,
Հով, հով, հովն ընգավ,
Մարտիս անուն՝ Մրութ է,
Միրուն կաքավ, նախշուն կաքավ,
Ձեռքես բաղավ, ճուրն ընգավ:

## 75 (155). ԷԼՆԵՆՔ ՍԱՐԸ
1

Համբարձման անուշ գիշեր,
Էլնենք սարը, բռնենք բոլորիգ պարը,
Աստղունքն են էրգլինք նախշեր,
Սարեր ջան, եդ գնայեք, տեսնիմ իմ յարը:
Էս գիշեր խավարեր, լուսնագ լուս չլիդեր
Էլնենք սարը, բռնենք բոլորիգ պարը,
Էրտեր յարիս ջտմպեն, չգդրեր ճարը,
Սարեր ջան, եդ գնայեք, տեսնիմ իմ յարը:
Մ՛յ կաքվուգ մըճ հանդերուն,
Էլնենք սարը, բռնենք բոլորիգ պարը,
Լո՛ւս գլույաս տեմ աստղերուն,
Սարեր ջան, ե՛դ գնայեք տեսնիմ իմ յարը:
Էնիր վիսի էրերուն,
Էլնենք սարը, բռնենք բոլորիգ պարը,
Թալիր էղեվ սարերուն,
Սարեր ջան, ե՛դ գնայեք, տեսնիմ իմ յարը:
Ընգա բալ - բալ քարերուն,
Սարեր ջան, ե՛դ գնայեք, տեսնիմ իմ յարը:

## 76 (156). ՎԱՐԴԱՎԱՌԸ ԳԱԼԻՍ Է
2

Վարդավառը գալիս է,
Իջնենք չայիրները, բռնենք մեր պարը,
Իմ սիրտը փունջ ծաղիգ է,
Սարեր ջան, եդ գնայեք, տուն գա իմ յարը:

Էս գիշեր, անուշ գիշեր,
Իջնենք չայիրները, բռնենք մեր պարը,
Ելնենք սարը, բռնենք բոլորիգ պարը,
Սարեր ջան, եդ գնայեք, տուն գա իմ յարը:

## 77 (157). ԷԼՆԵՆՔ ՉԱՅԻՐԻ ԱՓԸ
3

Էլնենք չայիրի ափը, բռնենք մեր պարը.
Սարեր ջան, դեն կնայեք, թող գա իմ յարը:
Հովեր ջան, հանդրտայեք, տեսնեմ իմ յարը:
Ես պուճուր, յարս պուճուր,
Ով կտա մեկ հայ ու ջուր:
Իճնեմ չայիրի ափը, բռնենք մեր պարը,
Սարեր ջան, դեն կնայեք, թող գա իմ յարը:
Հովեր ջան, հանդրտայեք, տեսնեմ իմ յարը:
Մեռնեմ ես սարի հովին,
Իճնեմ չայիրի ափը, բռնենք մեր պարը,
Յար ջան, մեռնեմ քո բոյին,
Սարեր ջան, դեն կնայեք, թող գա իմ յարը:
Հովեր ջան, հանդրտայեք, տեսնեմ իմ յարը:
Սարի ճուր, սարի ախպուր,
Իճնեմ չայիրի ափը, բռնենք մեր պարը,
Քույրի՛գ, արի ջուհաք տուր,
Սարեր ջան, դեն կնայեք, թող գա իմ յարը:
Հովեր ջան, հանդրտայեք, տեսնեմ իմ յարը:

## 78 (158). ԷԼԱԴՈՒՐ

Էլադուր, հա՛ էլադուր,
Էլադուր, էլադուր:
Էրգար արդը վար էնեք,
Էլադուր, էլադուր,
Սըվդըլու իմ, ջար էնեք,
Էլադուր, էլադուր,
Ծեգ ախճիգ՝ ընչնով էնեք:
Էլադուր, հա՛ էլադուր,
Էլադուր, էլադուր:
Ախճի, քու ծանդրիգ դարդեն,
Էլադուր, էլադուր,
Ստար չրդը քու սըվդեն,
Էլադուր, էլադուր,
Գդրավ ըմ սրդի փըրդեն:
Էլադուր, էլադուր:
Էլադուր, հա՛ էլադուր,
Էլադուր, էլադուր:
Էրտամ Քաղեշ, պերիմ նուռ,
Էլադուր, էլադուր,
Ջիգարս ի փատի մրմուռ,
Էլադուր, էլադուր,
Գառնիմ ընդուր՝ խագ ու ժուռ,
Էլադուր, էլադուր:
Էլադուր, հա՛ էլադուր,
Էլադուր, հա՛ էլադուր:

## 79 (159). ՎԱՅ, ՄԵՐԻԳ

Ախճի՛, անունդ ասա,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Ֆասիդ փուսկուլը՝ խաս ա,
Պարով էրտանք հայրենիք:

Թնդիր վառեմ ալապոյ,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Մերս կանչեյ իրա ծոյ,
Պարով էրտանք հայրենիք:

Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ, մերիգ,
Պարով էրտանք հայրենիք:

Խաղ ասողը փախել ա,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Ցալուդ կողքիգ կախվել ա,
Պարով էրտանք հայրենիք:

Ցըս խաղ կասեմ, տու՝ տառու,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Մի՛ թռի առու - առու,

Պարով էրտանք հայրենիք:

Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ, մերիգ,
Պարով էրտանք հայրենիք:

Կնը արի ման արի,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Պարծ կղնեմ, յան արի,
Պարով էրաանք հայրենիք:

Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ, մերիգ,
Պարով էրտանք հայրենիք:

Կնացի բաղը մղա,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Ման էգա յարիս գտա,
Պարով էրտանք հայրենիք:

Կացիք Մարատկու սարեր,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Սարու շըքեր գողրղան,
Պարով էրտանք հայրենիք:

Իրնղու վերի գոլը,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Սիրել եմ կոմսոմոլը,
Պարով էրտանք հայրենիք:

Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ,
Վա՜յ, մերիգ, մերիգ, մերիգ,
Պարով էրտանք հայրենիք:

## 80 (160). ՀԱՅՆԻԳ ՆԱՅ

Հայնիգ, նայ - նըր, նայ - նիգ, նայ - նըր, նայ, նայ,
Հայնիգ նինա, հայնիգ նինա, նայ, նայ, նայ:

Դղա, դղա մշեցի,
Մըր բաղ փլավ քու արով,
Գէրտամ ըսիմ իմ ախպոր՝
Գիկը վըրգը խրնջըլով,
Հանը քու գարմիր արուն,
Թափի մըջ քու սոլերուն,
Էլի լյվի շորերուն:

Հայնիգ, նայ - նըր, նայ - նիգ, նայ - նըր, նայ, նայ,
Հայնիգ նինա, հայնիգ նինա, նայ, նայ, նայ:

## 81 (161). ԽԸՄ - ԽԸՄԷ ԹՈՐԻԲԱՆ
### 1

Խըմ - խըմէ թորիբան,
Խըմ - խըմէ թորիբան,
Խըմ - խըմէ թորիբան:

Կնա, կնա գալիս եմ,
Խըմ - խըմէ թորիբան
Քըղնաչ եմ, լալիս եմ,
Խըմ - խըմէ թորիբաս:

Կնա, կնա հետիդ եմ,
Խըմ - խըմէ թորիբան
Ալ խնչոր եմ՝ կոտիդ եմ,
Խըմ - խըմէ թորիբան,
Խըմ - խըմէ թորիբան:

## 82 (162). ԽԸՄ - ԽԸՄԷ ԹՈՐԻԲԱՆ
### 2

Խըմ - խըմէ թորիբան,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:
Սասնա գէլեր պարագ ծուխ,
Խըմ - խըմէ թորիբան,
Գաբեց փուշին, թորգեց՝ բուխ,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:
Թողեց հային սիրեց քուրտ,
Խըմ - խըմէ թորիբան,
Խորտեր զէնեն ախ ու վուխ,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:
- Լուսնագ, խուրբան, ո՞ւր գէրթաս,
Խըմ - խըմէ թորիբան,
- Գէրթամ վըր Հըլքը սարին,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:
Բլբուլ նստէ վըր քարուն.
Խըմ - խըմէ թորիբան,
Գիլեր կաշուն ու կկարուն,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:
Խըմ - խըմէ թորիբան,
Խըմ - խըմէ թորիբան,
Սաղաֆէ քահրուբար:

## 83 (163). ԲԱՂՈՒՄԲԻ
### 1

Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Դանեն էլը՝ ղանքով կացի,
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Սալվին դուն չէր, նստա լացի:
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Սալվին կացի բագն ի լվաց,
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Դղեն դեսավ, խելաց կնաց:
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Կնաց հասավ ուր քուրոճ դուն,
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Պոնինք ուր թև, թալինք մըր ղուն:
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Էլեք էրթանք Գոնգու սար,
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Շինենք բերտմ', մղնանք հըսար,

Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Ղուլիմ հըրիր, գիդան՝ հըվար,
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի,
Շատ սիրունի խաթեր հըմար:
Բաղումբի հո՛յ, բաղումբի թո՛յ, բաղումբի:

## 84 (164). ԲԱՂՈՒՄԲԻ
## 2

Ուշիգ քելի, դանկով անյա,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Խանջալ վարգի՝ Էրտիգ պայվավ,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Թարգուլ քնած՝ ջենիգ չէրի,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Թունդիր անծավ, յան թալեյի,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Երեխեն լայավ՝ օրոբեյի,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Երեխեն լայավ, օրոբեյի,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Ոսկէ խնձոր գլորեյի,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Մեր դռան առաջ քառսուն կարաս,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Ձեր դռան առաջ քառսուն կաբաս,
Բաղումբի, թո՛յ բաղումբի,
Քառսուն կարսի կինին էր հաս,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Ամեն կարսին՝ փարշմ' լիդաս,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Ամեն փաբչիս՝ կթխեմ, իդաս,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Ամեն կթխին՝ մէ պագմ' աաս,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Մեր դռան առաջ առու հանած,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Ձեր դռան առաջ առու հանած,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Շուրթն ու բոլոր ռեհան ցանած,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Ինենք բախճեն, քաղինք խոտիգ,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Տանինք - դնինք մսրան մոդիգ,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:
Տեսնինք վի՞ր յարն է խոբոտիկ,
Բաղումբի, հա՛յ բաղումբի:
Սոլլեն էգավ մուքուկ գնդուկ,
Բաղումբի, հա՛յ բաղումբի,
Առավ Ջուլոն՝ մդավ սնդուկ,
Բաղումբի, թո՛յ բաղումբի:

## 85 (165). ՓԱՓՈՒՌԻ

Լուսնագ էրեգ ու ցերեգ,
Գանճեք ըմ յարոճ պերեք,
Քըփի բադդադիմ' գիդամ,
Խորոդիգն՝ ընչնով էնեք:

Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Փափուռ նսաի առւ գիւը,
Փափուռի շաքիկ շիւը,
Թունդրեն գէլի պարագ չուխ,
Բիլոռ աճկեր թուխ ու սուխ,
Ընդուր բես՝ հադմ' չկը
Մշու աաշտն ու Բուլանուխ:

Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Առակելոց կայլ ուխտ,
Մոմեր վառի ջուխտ - ջուխտ,
Ըսիր ու գառնիմ ընդուր,
Թըղ մամ էնը՝ կիր ու թուխտ:

Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

Բլբուլն էր վարաի վրեն,
Կաքավն էր՝ քըքի վրեն,
Ես ու կէն առնենք իրաբ,
Չոր կեդնի քըրի վրեն:

Փափուռի ջան, փափուռի,
Փափուռի ջան, փափուռի:

## 86 (166). ՌԱՅՆԻԳ - ՆԻՆԱՐԵ

Կիշրիգ խալար աուրս էլը,
Լուսնագը անուշ ցոլայ.
- Լուսնագ, խուրբա՛ն, ո՞ւր գէրտաս,
- Ցըս գէրաամ Աասնու սաբուն,
- Պարև դանիս ըմ յարուն:
Ռայնիգ - նինա, ռայնիգ - նինա,
Ռայնիգ - նինաբէ, նինա:

## 87 (167). ԽԱԼԱԼ Է, ՋԱԼԱԼ Է

Մոկաց շուկեն լեն ու հերկեն,
Խալալ է, ջալալ է:
Երկու ջահել կէրաեն - կիկեն,
Խալալ է, ջալալ է:
Մեկն էր բեղով, մեկն էր՝ անբեղ,
Խալալ է, ջալալ է:
Էն բեղովն էբ իմ ախպոր տեխ,
Խալալ է, ջալալ է:
Էն անբեղն էլ՝ աամ գրոդին:
Խալալ է, ջալալ է:
Տուն եմ շինէ կեդի պերան,
Խալալ է, ջալալ է:
Վրեն քըշի ջուխտամ' կերան,
Խալալ է, ջալալ է:
Մեկը խոխ էր, մեկը՝ ծիրան,
Խալալ է, ջալալ է:
Ծիրան պաղավ յարոջ բերան,
Խալալ է, ջալալ է:

## 88 (168). ԴԱԴԻԳ ԿԱԼՈՒՐ ԳՄԱԴԸ

Դադիգ կալուր գմադը,
Դադիգ կալուր գմադը,
Մըճ ապին լը՝ գշադը,
Վըր խնգան լը՝ գգողը:
Գարմիր քուռագ հեչիր իմ,
Դադիգ կալուր գմադը,
Արապին մողեյիր իմ,
Մըճ ապին լը՝ գշադը,
Վըր խնգան լը՝ գգողը:
Ջերիս պերանը նեղ է,
Դադիգ կալուր գմադը,
Կարմիր խնչորի տեղ է,
Մըճ ապին լը՝ գշադը,
Վըր խնգան լը՝ գգողը:

## 89 (169). ԷՄ ԼԸ ԿՈԿԱՆ

1

Է՛մ լը կոկան, փիարեթյիք,
Մե՛գ լը կոկան, փիարեթյիք.
Ճկո սիրող հըվըդործիկ,
Իճի Խասկեղ՝ դիս բարդի չաո,
Էգո Աոաղ՝ դիս դոսա ու յար:
Քըլըք փոսաիկ ըդ սասունյիք,
Չարուխ հակնող ըդ ախպեյիք,
Խարուկ գարող ըդ հիտնյիք,
Քուդուգ շինող ըդ շենիգյիք,
Գլգիլ ցանող ըդ աաշաեյիք,
Փլավ էպող ըդ խասկեղյիք,
Խաշ ուդող լին ըդ արդյիք,
Գլուլիգ ուդող ըդ մշեյիք,
Է՛մ լը կոկան, փիարեթյիք,
Մե՛գ լը կոկան, փիարեթյիք:

## 90 (170). Է, ԳԴԻ ԿՈԿՈ ԿԻԱՐԵԹԾԻՔ

2

Է, գդի կոկո պիարեթծիք.
Քրտու քոլոս քրդագումյիք,
Գարմիր քուդուգ խպլադաջյիք,
Թութուն ցանող մըր պերտագյիք,
Քելսի չախող մըր շեմլագյիք,
Քըրու գդրող մըր քուլպյիք,
Ծաղ խոնախասեր խասկեղյիք,
Ծաղ գովդան ըդ ցրոնյիք,
Կնը Նորշեն՝ դես բարդու չաո,
Էգո Աոաղ՝ դես դոսա ու յար,
Է, գդի կոկո պիարեթծիք:

## 91 (171). ՆԱՆԱՅ, ՆԱՅ, ՆԱՅ

Արեն բրչի ճուր գիկը,
Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Չիր ու չամիչ խաո գիկը:
Նա՜յ, նանայ նայ, նա՜յ, նայ, նայ:

Նասա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նանայ,
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նայ, նայ*:

Սասուն գէլներ սրարագ չուխ,
Նասա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Գէլներ գիճներ վըր Մշուն,
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նայ, նայ:

Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նա՛յ, նանայ, նայ, նա՛յ, նասայ,
Նա՜յ, նասայ, նայ, նա՜յ, նայ, նայ:

Ըդ ինճ բարուսի չուխ էր,
Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Ըմ յարի աճկիր թուխ էր,
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նայ, նայ:

Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նանա՜յ, նայ, նայ, նա՜յ, նանայ,
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նայ, նայ:
Նա՜յ, նանայ, նայ, նա՜յ, նայ, նայ:

## 92 (172). ՀԸՅՐՈ ՀԸՅՐԱՆ Է

1

Գըսին, Մշու տաշտ, ինչգ հըրուր դուն ը,
Հինգ հըրուր դան մեճ՝ ըմ սիրուն յարն ը:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Ծավոըշ մեվանէ:

Անդեր Մշու տաշտ, տուրան ու դույ էր,
Թուրքիան գայնիր էր, հայ վինվոր գույեր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Ծավոըշ մեվանէ:

Կայինք Ատամբոլ, պերինք ջուխտմ' սու,
Ցըս ու ըմ յար լը, հականք դորեդոր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Ծավոըշ մեվանէ:

Ցորին իմ ցանի, էլիր ը բարվլի,
Բդդիգ իմ սիրի՝ չըմ խիմշի կարգլի:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Ծավոըշ մեվանէ:

Հըյրոն նստիր ը, օդլի մութ քնցան,
Խըլվեն խմիր ը, տրլի վըր չնգան:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Ծավոըշ մեվանէ:

---

** Խոսքային և մեղեդային տեսակետից, հնչյունաշարային այս կրկնակն, հավանաբար, ունեցել է ինքնուրույն կիրառական նշանակություն, որն իր համար ապահովել է ռիթմական հավասար միավորներ և որոշակի չափ (Ծան. կազմողի):*

## 93 (173). ԴՈՒՆ ՄԸ ՇԻՆԻ ԿԵԴԻ ՊԵՐԱՆ

2

Դուն մը շինի կեդի պերան.
Վրեն քաշի էրգու կերան,
Մեջ պորոկ էր, մեջ լը ջիրան,
Ջիրան, ջիրան, քու դանողի դուն լը վերան:

Հըյրոն նստիր ը արևն ի թմբան,
Ջեռվին սըրիր ը հարևնի գնգան:
Հըյրո հըյրան ը, Լուսիգ ցըյրան ը:

Հըյրոն էլիր ը, նախլիր գյւանը,
Լուսիգ գայնիր ը քարման գմանը:
Հըյրո հըյրան ը, Լուսիգ` ցըյրան ը:

Հըյրոն նստիր ը վըր սավլի թմբան,
Խըլվեն խմիր ը տրլի վըր ջնգան:
Հըյրո հըյրան ը, Լուսիգ` ցըյրան ը:

Հըյրոն էլլիր ը խաչխաչ գյադը,
Լուսիգ գայնիր ը պաժագ գլսայը:
Հըյրո հըյրան ը, Լուսիգ ցըյրան ը:

## 94 (174). ՀԸՅՐՈ ՀԸՅՐԱՆ Է

3

Անդեր Մշու դաշտ, հինգ հըրուր դուն էր,
Մինու սիրուն լը` ըմ անուշ յարն էր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:
Կայնի Ստամբոլ, պերի ջուխտմ' սոլ,
Նս ու իմ յարս` հսկանք դորքիդոր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

## 95 (175). ՀԸՅՐՈ ՀԸՅՐԱՆ Է

4

Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

Հըյրոն նստեր էր բաղի մուտ քնջան,
Անկը քցեր էր` տրգեցլի գնգան:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

Գըսեն, էն Խասկեղ, հինգ հըրուր դուն էր,
Մինի խորոդիգ` ըմ անուշ յարն էր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

Գէրտամ Ստամբոլ, պերիմ փարը բոլ,
Գառնիմ ջուխտմ' սոլ,
Յըս ու իմ յարը` հակնինք դորեցդոր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

Գյերես նուռը, գկայնեմ տուռը,
Չես պերի նուռը` չեմ նաւնի տուռը,
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

Գըսեն` Մշու տաշտ հինգ հըրուր դուն էր,
Հինգ հըրուր դան մեջ` խորոդ ըմ յարն էր:
Հըյրո հըյրան է, Հըյրո հըյրան է,
Հըյրո հըյրան է, ճավըրշ մեվանէ:

## 96 (176). ՀԱ ՄԸՅՐԸՄ

Հա՛ Մըյրըմ, հա՛ Մըյրըմ,
Հա՛ Մըյրըմ` Սասունի:
Կնսյի քաղը մդա,
Հա՛ Մըյրըմ, հա՛ Մըյրըմ,
Մաս էգա յարիս կդա,
Հա՛ Մըյրըմ` Սասունի:
Կանաչել է արդերը,
Հա՛ Մըյրըմ, հա՛ Մըյրըմ,
Թժժացել է դարդերը,
Հա՛ Մըյրըմ` Սասունի:
Էրնեզ քեզի, դարդ չունես,
Հա՛ Մըյրըմ, հա՛ Մըյրըմ,
Վէրի մաղեն յար չունես,
Հա՛ Մըյրըմ` Սասունի:
Պարապ եմ, պարդի չառ ես,
Հա՛ Մըյրըմ, հա՛ Մըյրըմ,
Կրակ եմ` մարդ գվառեմ,
Հա՛ Մըյրըմ` Սասունի:

## 97 (177). ԽՈՐՈԴԻԳ ՄԸՅՐՈ

Լէ - լըմ լէ, լէ,
Լէ - լըմ լէ, լէ,
Լէ, լէ, լէ, Մըյրո,
Անի՛գ սիրուն, շադ խորոդիգ,
Խորոդի՛գ Մըյրո:
Ախճի՛ քու անուն Մըյրըմ,
Լէ - լըմ լէ, լէ,
Լէ - լըմ լէ, լէ,
Լէ, լէ, լէ, Մըյրո,
Էրտանք սարերը սեյրան,
Սնի՛գ սիրուն, շադ խորոդիգ,
Խորոդի՛գ Մըյրո:
Ռշդիգ ախճիգ` լեն պերան,
Լէ - լըմ լէ, լէ,
Լէ - լըմ լէ, լէ,
Լէ, լէ, լէ, Մըյրո,
Քու դանողի դուն վերան,
Սնի՛գ սիրուն, շադ խորոդիգ,
Խորոդի՛գ Մըյրո:

## 98 (178). ՀԱՄ ԳՈՒԼ, ՀԱՄ ՎԱՐՏ, ՀԱՄ ՆԱՐԳԻԶ

Հա՛մ գուլ, հա՛մ վարտ, հա՛մ նարգիզ,
Չոլի գռունգ, էրգեն վիզ:
Ախճի՛, քու անուն Մըյրամ,
Հա՛մ գուլ, հա՛մ վարտ, հա՛մ նարգիզ,
Էրտակ մըր սարիր սեյրան,
Չոլի գռունգ, էրգեն վիզ:
Տի՛ր ըմ խոյերուն` մըհլամ:
Հա՛մ գուլ, հա՛մ վարտ, հա՛մ նարգիզ,
Ախճի՛, ջամդ հուսեիր,

Հա՛մ գոչ, հա՛մ վարտ, հա՛մ նարգիզ,
Դնչիդ՝ ռեհան քսեիր,
Չոլի գռունգ, էրգես վիզ:

## 99 (179). ԱԼՄԱՆ. ԱԼՄԱՆ

Կարուդ քուռագ հեչել եմ,
Ալման, ալման, ալ Մայրամն է ծեր դուսը,
Արապին մոդայել եմ,
Դասէրգուր ջան՝ դոստ խոնախ է, մայրի՛գ ջան:
Կանաչ արդը մի՛ կոխի,
Ալման, ալման, ալ Մայրամն է ծեր դունը,
Սիրաչ յարը՝ մի՛ փոխի,
Դասէրգուր ջան՝ դոստ խոնախ է, մայրի՛գ ջան:
Ալման, ալման, ալ Մայրամն է ծեր դունը,
Դասէրգուր ջան՝ դոստ խոնախ է, մայրի՛գ ջան:

## 100 (180). ԴՈՆԻ. ԴՈՆԻ
## 1

Դոնի, դոնի, դոնի յարէ,
Վըլըյ դոն, դոնի յը,
Դոնի, դոնի, դոնի, յարէ,
Բիլըյ դոն, դոնի յը:
Էրտանք բախչեն՝ քաղինք խոդիզ,
Վըլըյ դոն, դոնի յը,
Պերիկ տրիք մսրա մոդիզ,
Բիլըյ դոն, դոնի յը,
Տեսնիք ո՛ւմ յարն ը խորոդիկ,
Վըլը դոն, դոնի յը,
Ըմ յար կըց քում՝ է՛լ խորոդիկ:
Բիլը դոն, դոնի յը:
Դանկեն ընսը, թափ քելեցի,
Վըլը դոն, դոնի յը,
Ջխընջըլ թըլի՝ կէրաի՛գ պայի,
Բիլը դոն, դոնի յը:
Շողոն դուն չէր՝ նստը լայի:
Վըլը դոն, դոնի յը:
Շողոն կայի բագն ի լվայ,
Բիլը դոն, դոնի յը,
Դաշաիգ գոդրավ, ճրիգ կնայ,
Վըլը դոն, դոնի յը,
Այլուղ - յայլուղ՝ մեճին մնայ:
Դոնի, դոնի, դոնի, յարէ,
Վըլը դոն, դոնի յը,
Դոնի, դոնի, դոնի, յարէ,
Բիլը դոն, դոնի յը:
Մըր դան էդիվ քառսուն գարաս,
Վըլը դոն, դոնի յը,
Ձըր դան էդիվ քառսուն գարաս,
Բիլը դոն, դոնի յը,
Քառսուն գարսի կինին էր հաս:
Վըլը դոն, դոնի յը:
Ամեն գարսեն պաժագմ' դաս,
Բիլը դոն, դոնի յը,
Պաժագմ' դաս, տու կորենաս,
Վըլը դոն, դոնի յը,
Ամեն պաժգին՝ բաճիգմ' դաս,
Բիլը դոն, դոնի յը:
Բաճիգս' դաս, տու կորենաս,
Վըլը դոն, դոնի յը,
Թը տու չըռաս տու կոտենաս:
Բիլը դոն, դոնի յը:
Դոսի, դոսի, դոնի, յարէ,
Վըլը դոն, դոնի յը,
Դոնի, դոնի, դոնի, յարէ,
Բիլըյ դոն, դոնի յը:

## 101 (181). ԴՈՆԻ. ԴՈՆԻ
## 2

Մըր դուն, ծըր դուն իրար մոդիզ,
Վըլըյ դոն, դոսի է,
Ըմ յար կըց քում՝ է՛լ խորոդիզ,
Բիլըյ դոն, դոնի է:

Մըր դան էդիվ պուլ մը թփի,
Վըլըյ դոն, դոնի է,
Ձըր դան էդիվ պուլ մը թփի
Բիլըյ դոն, դոնի է:

Ձըր դան էդիվ պուլ մը թփի,
Արին ընչի, կըվնար՝ քփի,
Բիլըյ դոն, դոնի է:
Դոնի, դոնի, դոնի յարէ
Վըլըյ դոն, դոնի է:

Տըռ չըք ուզի մեղօք հանաչ,
Վըլըյ դոն, դոնի է,
Տըռ չըք պերի բուխթան գաբաչ,
Բիլըյ դո̄ն, դոնի է:

Դերդեր էգավ, մուրուր գնդուզ,
Վըլըյ դոն, դոնի է,
Առավ պէդսոն՝ մդավ սնդուկ,
Բիլըյ դո̄ն, դոնի է:

## 102 (182). ԴՈՆԻ. ԴՈՆԻ
## 3

Դոնի, դոնի, դոնի յարս,
Վըլը դոն, դոնի յը,
Մըր դան էդիվ քառսուն գարաս,
Վըլը դո̄ն, դոնի յը,
Քառսուն գարսի կինին էր խաս,
Բիլը դոն, դոնի յը:
Ամեն գարսեն՝ փարչ մը իդաս,
Վըլը դոն, դոնի յը,
Ամեն փարչեն՝ կթխեմ իդաս,
Բիլը դոն, դոնի յը:
Ամեն կթխին՝ բակ մը իդաս,
Վըլը դոն, դոնի յը,
Թը տու իդաս՝ տու կորենաս,
Բիլը դոն, դոնի յը:
Թը տու չիդաս, տու կոտենաս,
Վըլը դոն, դոնի յը,
Մըր դան էդիվ չառ մը սնդուկ,
Բիլը դոն, դոնի յը:

Մինու - մինու առու հանուց,
Վըլը դոն, դոնի յը,
Ծուրթն ու պուլուր՝ ռեհան ցանուց,
Ռիլը դոն, դոնի յը:
Մըր դուն, ծըր դուն իրար մոդից,
Վըլը դոն, դոնի յը,
Իմ յար կըց քում՝ Էլ խորոդից,
Ռիլը դոն, դոնի յը:

## 103 (183). ԴՈՆԻ, ԴՈՆԻ

Դոնի, դոնի, դոնի յարո,
Վըլը դոն, դոնի յը,
Մըր դան էյիվ արդմ՝ տտում,
Քու հեր մեռավ՝ չէգը խռում,
Վըլը դոն, դոնի յը:
Երեց էգավ մուրուկ գնդուց,
Առավ Զուլոն՝ մդավ սնդուկ,
Վըլը դոն, դոնի յը:
Մդավ սնդուկ, ճարալից սնդուկ,
Օվու դեսավ՝ մնաց պըպուց,
Վըլը դոն, դոնի յը:

## 104 (184). ՀԸ՛ ՅԱՐ

Հը՛ յար, հը՛ յար, հը՛ յարի,
Զարտուխած գլկեն քաղերաց,
Քաղեր են կվարտ ու կմանիշագ,
Անուշ հոտ գլկեր ծեռներաց:
Հը՛ յար, հը՛ յար, հը՛ յարի,
Գըղդող, ժըռող քառվնիր,
Ժըռող, լըռող հսլվորնիր,
Զարտորված գլկեն քաղերաց:
Քաղեր են կվարտ ու կմանիշագ,
Անուշ հոտ գլկեր ծեռներաց:
Հը՛ յար, հը՛ յար, հը՛ յարի:

## 105 (185). ՏԱՅ - ՆԸՐ ՆԱ՛Յ

Հոշի ջառնիր մռճեմով,
Ռեսի դդեն քրճամով.
Խրնջըլն էր գարփ ջռնով,
Չուր յը՞պ ընծնիս մըր տռնով,
Տայ - նըր նա՛յ, տայ - նըր նա՛յ:
Զըրգիմ ջչի խընջալ խորուն,
Էլնի քու գարմիր արուն,
Թափի վրր քու շորերուն,
Լծվի մըճ քու սոլերուն:
Տայ - նըր նա՛յ, տայ - նըր նա՛յ:

## 106 (186). ՆԻՆՄ, ՆԻՆՄ, ՆԻՆԱՐԷ

Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, ջա՛ն նինարէ:

Օվալուսնաց նորեր ը,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նորեր ը, քոլորեր ը, հա՛յ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ:

Յարոճ կոդին գորեր ը,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Գորեր ը, մոլորեր ը,
Հա՛յ նինարէ, ջա՛ն նինարէ:

Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, ջա՛ն նինարէ:

Առվէ - առու իմ թսի,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Քառսուն զակավ իմ պռնի,
Հա՛յ նինարէ, ջա՛ն նինարէ:

Անուշ յարոճն իմ ջամպի,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, ջա՛ն նինարէ:

## 107 (187). ՆԻՆՄ, ՆԻՆՄ ՆԻՆԱՐԷ 2

Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ:

Սարեն քըջի ճուր գուկա,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Չիր ու չամիչ խառ գուկա,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ:
Սարեն իճան ջուխա ախճիգ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Զխտի կոկնոցն էր լաստից,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ:
Ճերմագ խոճը մսայու,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Իմ ախպերն էր փեսայու,
Հա՛յ Ֆըլըք է, հա՛յ դունյա է:
Կանաչել են արտերը,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Թաժայել են դարդերը,
Հա՛յ Ֆըլըք է, դունյա է:
Օուկին կորջի ճաղերով,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Քյլի խասլիմ՝ խաղերով,
Հա՛յ Ֆըլըք է, դունյա է:
Ես ինճ արի, դուն արիր,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Քոռով սավդի տեր արիր,
Հա՛յ Ֆըլըք է, դունյա է:
Պարքաշու գլխի լենտը,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Տարավ ըմ գլխի խելքը:
Հա՛յ Ֆըլըք է, դունյա է:

Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ,
Հա՛յ նինարէ, հա՛յ նիսարէ:

## 108 (188). ՆԻՆԱՐԷ, ՆԻՆԱՐԷ

Կացի Սասուն՝ անյար եք, նինարէ, նինարէ,
Նինմ, նինմ, նինարէ, նինմ, նինմ, նինարէ:
Պարծք վկեռնիր՝ բլբար էր, նինարէ, նինարէ,
Պերի յարմ՝ չինար էր, նինարէ, նինարէ:
Օվալուսնագ լուսով էր, նինարէ, նինարէ,
Հարցի. - Լուսնագ ո՞ւր գէրտաս, նինարէ, նինարէ,
- Գէրտամ վըր Սասնա սարուն, նինարէ, նինարէ,
- Ծաղ պարն դանիս յարուն, նինարէ, նինարէ:
Նինմ, նինմ, նինարէ, նինմ, նինմ, նինարէ:

## 109 (189). ՆԱՐ, ՆԱՐ, ՆԱՐԳՈՒԼՈՒՄ

Նար, նար, նարգուլում,
Հա՛մ թալան էր, հա՛մ կուլում:

Կարնան չաղիգ նունուֆար,
Առնինք իրար, էլնինք սար,
Նար, նար, նարգուլում,
Հա՛մ թալան էր, հա՛մ գուլում:

Ախպէրմ՛ ունիմ՝ մէ հադ ը,
Աստված վէրիվ՝ շիադ ը,
Նար, նար, նարգուլում,
Հա՛մ թալան էր, հա՛մ գուլում:

## 110 (190). ՆԱՐ, ՀԱՅ, ՆԱՐ

- Լուսնագ, խուրբան, ո՞ւր գէրտաս,
Նար, հա՛յ, նար, նարամն,
- Գէրտամ վըր Սասնու սարուն,
Ջան, հա՛յ, ջան, ջիգարամն,
- Պարն դանիս ըմ յարուն:
Նար, հա՛յ, նար, նարամն:
Դարին դըսվէրգու ամիս,
Նար, հա՛յ, նար, նարամն,
Խնչուրն էր թառմէ կողիս,
Ջան, հա՛յ, ջան, ջիգարամն:
Խնչորմ՛ ունիմ խըչուգ ը,
Նար, հա՛յ, նար, նարամն,
Չորս թին ըռ՝ արչթուգ ը,
Ջան, հա՛յ, ջան, ջիգարամն:
Էլը խուլնույ խուղ թալի,
Նար, հա՛յ, նար, նարամն,
Քվի՝ խնչորով խապի,
Ջան, հա՛յ, ջան, ջիգարամն:

## 111 (191). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ
### 1

Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Յըս մարալ, յարս՝ ջեյրան:
Բկդիգ թունդիր մխիր իմ,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան.
Յառիս չուխեն բխիր իմ,
Յըս մարալ, յարս՝ ջեյրաս:
Մըր սարիր սաչոդիր ը,
Նարոյ, նարոյ, սարոյ ջան,
Ոճխար լը պրտոդիր ը
Յըս մարալ, յարս՝ ջեյրան:
Ոճխար դարիր իմ բէրի,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Էլնէ՛ր հարաւլու քամի,
Յըս մարալ, յարս՝ ջեյրաս:
Ախճի՛, անռնտ ըսը,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Յըս գէղնիմ՝ հորտ փեսը,
Յըս մարալ, յարս՝ ջեյրաս:
Օվ չսյարը էս լավ սյար,
Նարոյ, նարոյ, նարոյ ջան,
Մեռնի իրը գդրիճ յար,
Յըս մարալ, յարս՝ ջեյրան:

## 112 (192). ՆԱՐՈՅ, ՆԱՐՈՅ*
### 2

Նա՛րոյ, նա՛րոյ, նա՛րոյ ջան,
Անիգ, սիրուն յարո ջան:

Ախճի՛, ո՞րն է իմ մեղը,
Նա՛րոյ, նա՛րոյ, նա՛րոյ ջան,
Հալեցիր սրդիս եղը,
Անիգ, սիրուն յարո ջան:

Թալին արին ադարան,
Նա՛րոյ, նա՛րոյ, նա՛րոյ ջան,
Գանճին իմ յարին դարան,
Անիգ, սիրուն յարո ջան:

Սարի հեղն առւն ունեմ,
Նա՛րոյ, նա՛րոյ, նա՛րոյ ջան,
Հիղլերի սյես շուն ունեմ
Անիգ, սիրուն յարո ջան:

## 113 (193). ԱՍՄԱ՛Ր, ԸՄԱՆ
### 1

Ասմա՛ր, ըման, ըման, ըման,
Դիլբար ու դըլալ է, յըմա՞ն:
Ասմա՛ր, մ՛իքա, մեր տուն ծուխ է,
Դիլբար, մ՛իքա, մեր տուն ծուխ է,
Չայրի սյուրր՝ թամամ պուխ է,
Խորաեր գենեն՝ ախ ու վուխ է:
Ասմա՛ր, ըման, ըման, ըման,
Դիլբար ու դըլալ է, յըմա՞ն:

---

** Այս տարբերակում՝ բառի բնական և մեղեդային շեշտերը չեն համընկնում, կատարվում է շեշտի տեղափոխություն. շեշտը դրվում է առաջին վանկի վրա, յամրական ոտքը փոխվում է քորեյի և ռիթմը արագանում է (արագացվում են նաև պարային քայլերը), (Ծան. կազմողի):*

## 114 (194). ԱՌ ՅԱՐ. ԸՍԱՆ

2

Էրգու քոլոլիգ, չեգ հարս,
Իճան սարեն, էգան յաչ,
Մեզլին գրսեն՝ ռեսլի հարս,
Ճալ մը գուզլիմ՝ Էրգուս դաս,
Թոն չիդաս լը՝ կոտենաս:
Մ՜ի, յար ըսան, ըսմըր ըսան,
Գանեն էլը դամ ըելեյլի
Էլը տունեն, դանկով կաժլի,
Ջիւնչալ թոլլի վէրտից պաժլի,
Յարս ի դուն չէր՝ նստը լայի:

## 115 (195). ԸՍՄԸՐ. ԸՍԱՆ

3

Ըսմըր էլավ գէրտեր օղին,
Դիլըր էլավ գէրտեր օղին,
Ըրկինք վարգեց վվի դողին,
Յըս գմեսնիմ՝ քու ստեղծողին:

Ըսմըր մ'ինը, մըր դուն ջուխ է,
Ջալո, մ'ինը, մըր դուն ջուխ է,
Աճկիր բըլըր, ունքիր՝ թուխ է,
Ախեր վմուշ, Ռալանըխ լէ:

Դանկով էլը կան ըելեյլի,
Խանջալ վարգլի՝ վէրտից պայլի,
Յարուգ դուն չէր՝ նստը ու լայի,
Նստը ու լայի, մղգդայի:

Ըսմըր ըման, ըման, ըման,
Դիլբար է, դըլալ է յըման:

## 116 (196). ԽԱՆԷ. ՅԸՄԱ՛Ն

Խանէ յըման, ի՜նճ ը գէնիս,
Ջանէ յըման, ի՜նճ ը գէնիս,
Ալըմաղով՝ ցան գայերիս,
Ածուն գույլիմ՝ թան գայերիս:
Խանէ, յըմա՜ն, յըմա՜ն, յըմա՜ն,
Դիլբար ու դըլալ է յըման:
Խանէ՛, մ'ինկը, մեր դուն ջուխ է,
Ջանէ, մ'ինկը, մեր դուն ջուխ է,
Ըմ յարոճ աճկեր լէ՝ թուխ է:
Խանէ, յըման, յըման, յըման,
Դիլբար ու դըլալ է յըման:

## 117 (197). ՏԸՅՐՈ ՋԱՆ

Դարին տասնէրգու ամիս,
Տըյրո, Տըյրո, Տըյրո ջան,
Խնչորն էր թառմէ կողիս,
Էլ չըմ խաղը, ջանո ջան:
Խնչորի գես՝ խաչուգ էր,
Տըյրո, տըյրո, աըյրո ջան,
Խաչուգ էր, խաչմչուգ էր,
Էլ չըմ խաղը, ջանո ջան:
Տըյրո, Տըյրո, Տըյրո ջան,
Էլ չըմ խաղը, ջանո ջան:

## 118 (198). ՎԸԼԸ. ԳԱՌՆԻՄ ՋԷԼՈ ՔՈՒՐ

1

Էրտամ բախչեն պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:
Ծուր գրի լցի կուռը,
Աճկս ասայ չեր տուռը,
Անդեր մներ չեր տուռը,
Չէլավ սրդիս մրմուռը:

Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, քաղիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Տղա՛ թութուն մի քաշի,
Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Կդա սիրդտ կմաշի:
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Աիճի՛, տու ինչ լավն ես,
Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Էսօր չեր տուն կտասես,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Էսօր օրը կիրագի,
Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Մեր չուլորը՝ տրաքի,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Աղճի՛, նուռը խաչաչ էր,
Աղճի՛, թուշդ պաճաչ էր,
Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Արն առավ առվնիր,
Աստված քաղը կբառվնիր,
Վըլը, գառնիմ Ջէլո քուր,
Բի'լը, գառնիմ Ջէլո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Արև առավ էդ գործեր,
Աստված բրիք վխորաեր:
Վըլը, գառնիմ Ձեւո քուր:
Քի՛լը, գառնիմ Ձեւո քուր,
Էրտամ բախչեն, պերիմ նուռ,
Դանում տրիմ ժամու տուռ:

Արև առավ պըլըռգդիք,
Աստված քաղը վախճգդիք:
Վըլը, գառնիմ Ձեւո քուր,
Քի՛լը, գառնիմ Ձեւո քուր:

## 119 (199). ՏՈ ԳՆԻԳ, ՄԻԼԸ
## 2

Տո գնի՛գ, մ՛իլը, մ՛անիչը վիս.
Գէրտամ պերիմ հոխեմ՛ լը միս,
Գխնդանաս, գէլիս էպիս:
Վըլը, գառնիմ յըս Ձէւո քուր,
Գէրտամ Քաղեշ, գպերիմ նուռ,
Դանիմ թապիմ ժամու տուռ,
Հըրմեզ նռան՝ բակ մը դուր:

## 120 (200). ԼԻ, ԼԻ

Լի, լի, լի, լի, լի, լի,
Լի, լի, լի, լի, լի, լի,
Դանկով էլը դան քելեյի,
Խընձըլ թըլի՝ վէրտից պածի,
Ծուշոն դուն չէր՝ նստը լայի:
Լի, լի, լի, լի, լի, լի,
Լի, լի, լի, լի, լի, լի:
Գիսըհոկի մըր դուն կայի,
Յարոճ վրեն՝ խաղ գաբեյի,
Դեսը չէգավ՝ խռովեյի:
Լի, լի, լի, լի, լի, լի,
Լի, լի, լի, լի, լի, լի,
Ջամպան խարկուն հանդիբեյի,
Խարկուն պարե չդվեյի,
Հողըներուն՝ շիվարեյրի:
Լի, լի, լի, լի, լի, լի,
Լի, լի, լի, լի, լի, լի:

## 121 (201). ԱԽՃԻ՛, ՔՈՒ ԱՆՈՒՆ ԱՍԷ

Ախճի՛, քու անուն ասէ,
Աիրո՛ն, քու անուն ասէ,
Ախճի՛, քու անուն Ծուշան,
Աիրո՛ն, քու անուն Ծուշան,
Արի էրտանք սուրբ նշան,
Օսկէ մաղնիք՝ քու նշան:
Ախճի՛, քու անուն ասէ,
Աիրո՛ն, քու անուն ասէ,
Ախճի՛, քու անուն Աառէ,
Մապերդ՝ խառռումոռ է:
Ախճի՛, քու անուն ասէ,
Աիրո՛ն, քու անուն ասէ:

## 122 (202). ԱՅ ՍԻՐՈՒՆ ԿԱՔԱՎ

Գնա, գնա, հեդիտ ես,
Ա՛յ սիրուն կաքավ,
Էլի պարը պոլրավ:
Ալ խնչոր եմ՝ կոդիտ եմ,
Ա՛յ սիրուն կաքավ,
Էլի պարը պոլրավ:

Հըր յը՛պ անսնի վիդա պար,
Ա՛յ սիրուն կաքավ,
Էլի պարը պոլրավ,
Կեդին սառծավ գոպադար,
Ջան սիրուն կաքավ,
Էլի պարը պոլրավ: ,

## 123 (203). ՀԱ, ՆԱՆԱ ՆԱՆԱ, ՆԱՆԱ

Հա՛, նանա՛, նանա՛, նանա՛,
Ընկանու կպերան գպանը՝
Ծակար գիկը Երևանը,
Հա՛, նանա՛, նանա՛, նանա՛,
Պոլոր էրիս՝ գարօլիգ չանը:

Դդեն գայնի գարմնօհն.
Դոլաք օդեր անգօհն,
Հա՛, նանա՛, նանա՛, նանա՛,
Ջուհաք դարեկ կոքնքհն՝
Ախճնիգ հդը գդրիճհն:
Հա՛, նանա՛, նանա՛, նանա՛:

## 124 (204). ՀԱ՛, ՆԱՆԵՐ
## 1

Աարեն բրչի ճուր գիկը,
Հա՛, նաներ, նաներ ջան,
Ձիր ու չանիչ խառ գիկը,
Սարեր ման գալող յար ջան:
Անցա Արապի կուռը,
Հա՛, նաներ, նաներ ջան,
Քաղեյի Գենջա նուռը,
Սարեր ման գալող յար ջան:
Խոնդադը՝ քոյրն ը,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Ախճիգ՝ դդի հոկին ը,
Սարեր ման գալող յար ջան:
Արի էլնենք քարափը,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Իջնենք ջրերի ափը,
Աարեր ման գալող յար ջան:

## 125 (205). ՀԱ՛, ՆԱՆԵՐ

Սարից բրչի ճուր գիկը,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Ձիր ու չամիչ խառ գիկը,
Աարերով ման գալող յարռ ջան:
Ըդ ի՞նճ բարուտի չուխ էր,

Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Ըմ յարի աճկիր թուխ էր,
Մարերով ման գալող յարո ջան:
Խնձոր դվլի, տու չառար,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Էս ինձ բերախտ յար տառար,
Մարերով ման գալող յարո ջան:
Կայլիք, կայլիք հեռեցաք,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Հըլբը սարուն մոռեցայ,
Մարերով ման գալող յարո ջան:
Խոնդյարը խոքին ը,
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Ախճիկ՝ դդի լոկին ը,
Մարերով ման գալող յարո ջան:
Մարերը սնձոտել են,
Հա՛ նաներ, նաներ, նաներ ջան,
Ուչխարը բրդոտել են,
Մարերով ման գալող յարո ջան:
Հա՛, նաներ, նաներ, նաներ ջան,
Մարերով ման գալող յարո ջան:

## 126 (206). ՀՈՅ ՆԱՆԵՐ

Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Էդ էլ բրխտի պան էր:

Ըդ ի՞նչ ռարութի ջուխ էր,
Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Ըմ յարի աճկյա թուխ էր,
Էդ էլ բրխտի պան էր:

Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Էդ էլ բրխտի պան էր:

Ընչերն էր սև, աճկեր թուխ,
Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Յարմ' ունեյ Ռուլանուխ,
Էդ էլ բրխտի պան էր:

Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Էդ էլ բրխտի պան էր:

Սուրպ Օվանես ուխտ էնի,
Հո՛յ, նաներ, նաներ, նաներ,
Մավիրդ հուսի՝ ջուխտ էնի
Էդ էլ բրխտի պան էր:

## 127 (207). ԱՅՍՕՐՎԱ ՕՐԸ

Այսօրվա օրը ինչ համար դառել ը տարի,
Նամագ եմ գրէ՝ Ռոստովի պոեցով արի՛:

Յարիս դեսա յայլի չոր,
Այսօրվա օրը ինչ համար դառել ը տարի,
Նման էր կարմիր խնձոր,
Նամագ եմ գրէ՝ Ռոստովի պոեցով արի՛:

Ախճի՛, անունդ ասա,
Այսօրվա օրը ինչ համար դառել ը տարի,
Ես կէղնեմ սորդ փեսա,
Նամագ եմ գրէ՝ Ռոստովի պոեցով արի՛:

Քուր ջան, չենդ հանեցիր,
Այսօրվա օրը ինչ համար դառել ը տարի,
Պարի մեջը ցանեցիր,
Նամագ եմ գրէ՝ Ռոստովի պոեցով արի՛:

## 128 (208). ԱՐԵՎՆ ԷԼԱՎ

Սիրուն ախճգա տերը,
Արևն էլավ, ճառագայթը փայլեց,
Ան կարի գեշի մերը,
Տո շան դդը, քո սերն ընչի վառեց:
Էս ինչ դուշ է էն քարին,
Արևն էլավ, ճառագայթը փայլեց,
Տվե՛ք, տանեմ իմ յարին:
Տո՛, շան տղա՛, քո սերն ընչի վառեց:
Վանքի կդրի գիլավը,
Արևն էլավ, ճառագայթը փայլեց,
Վանքը՝ տա չեր մուրակը:
Ա՛յ շան ախճիգ, քո սերն ընչի վառեց:
Գրգո՛ւո, քու ծեն անուշ էր,
Արևն էլավ, ճառագայթը փայլեց,
Անուշ էր, բաղի նուշ էր,
Ա՛յ շան ախճիգ, քո սերն ընչի վառեց:

## 129 (209). ՄԱՂԻՏ ՄԱՆԱԾ՝ ՄԱՎԻ ԷՐ

Մաղիտ մանած՝ մավի էր,
Տո՛ շան ախճի՛գ, էս ի՞նչ կուլում դավի էր:
Ախճի՛, կինուց անուշ ես,
Մաղիտ մանած՝ մավի էր,
Համ խնգենի, համ նուշ ես,
Տո՛ շան ախճի՛գ, էս ի՞նչ կուլում դավի էր:
Արերի հովլին մեռնեմ,
Մաղիտ մանած՝ մավի էր,
Ծեգ եղբա՛ր, բոյիդ մեռնեմ,
Տո՛ շան ախճի՛գ, էս ի՞նչ կուլում դավի էր:
Ախճի՛ դու հուր ես, մուր ես,
Մաղիտ մանած՝ մավի էր,
Ես ծառավ եմ, դու ջուր ես,
Տո՛ շան ախճի՛գ, էս ի՞նչ կուլում դավի էր:

## 130 (210). ԱԽ ԼԷ, ԼԷ, ԼԷ

Աշու սարի ճուրն անուշ,
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան,
Յարիս պագիկն էր անուշ,
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Ջա՜ն լէ, լէ ջան:
Ըսին՝ ո՞ւր է քու յարը,
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան:
Հնդը վըր Հըլբու սարուն:

Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան,
Ըսին՝ էգան գդանուն,
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան,
Ջըմ խորոդ յար գդանուն:
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան,
Թուրքի փաշին՝ գդանուն:
Գնա, գնա գալիս եմ,
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան:
Հեղնիդդ լալիս եմ:
Ա՜խ լէ, լէ, վա՜խ լէ, լէ,
Վա՜խ լէ, լէ ջան:

## 131 (211). ՄԱՄՈՒ ՄՐՋԱՆ

Մամու մրջան խըրըֆիլով շարուգ էր,
Մամու ջիգար՝ օղար աշխարհ դարուգ էր:
Ախճի՛, արի բան ասեմ,
Մամու մրջան խըրըֆիլով շարուգ էր,
Մակերդ մանդր հուսեմ,
Մամու ջիգար՝ օղար աշխարհ դարուգ էր:
Ախճի՛, քու անուն ասա,
Մամու մրջան խըրըֆիլով շարուգ էր,
Ես կէղնիմ հորդ փեսա,
Մամու ջիգար՝ օղար էրգիր դարուգ էր:
Սարեն իճան ջուխամ՝ խուչ,
Մամու մրջան խըրըֆիլով շարուգ էր,
Մեզը փնչայ, մեզը՝ ոչ,
Մամու ջիգար՝ օղար էրգիր դարուգ էր:
Ուխտ ու պայման արել եմ
Մամու մրջան խըրըֆիլով շարուգ էր,
Պայմաններդ պայել եմ,
Մամու ջիգար՝ օղար էրգիր դարուգ էր:

## 132 (212). ԲԱԹՈԼԱ ՋԱՆ

Բաթոլա ջան, բաթոլա,
Ծաքար ու շըրբըթ ծով ա:
Կայնել ես շոշի վրա,
Բաթոլա ջան, բաթոլա,
Աահաթը՝ դոշի վրա,
Ծաքար ու շըրբըթ ծով ա:
Ղարսա բերըը փլել ա,
Բաթոլա ջան, բաթոլա,
Յարս տակը քնել ա,
Ծաքար ու շըրբըթ ծով ա:
Բաթոլա ջան, բաթոլա,
Ծաքար ու շըրբըթ ծով ա:

## 133 (213). ԳԴԻՌ ՅԸՄԱՆ

Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Ֆիդան յարը ինչ դվեր,
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Արռիգ մալուլ մ'թողեր,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Ճադծի ջամպեն ջուռ ու մուռ,
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Մուգ ու կադուն քեւլ ջմուռ,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Արիվ առավ առվնիր,
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Ասավաչ առնը բառվնիր,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Հերիք ասես, անառա՛կ,
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Կանեմ՝ խաղք ու խայդառակ,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:
Գդիռ յըման, Գդիռ յըման, հո՛ յըման,
Գդիռն էգավ, մըր դուն չէգավ, թո՛ յըման:

## 134 (214). ԼՈՅ, ԼՈՅ

Ձիավորյդ փախել,
Լոյ, լոյ, լոյ, լոյ լո, վա՜յ լո,
Սասմա սարեր էլեր է:
Սասմա սարեր էլեր ը,
Լոյ, լոյ, լոյ, լոյ լո, վա՜յ լո,
Ծիլ - ծիլ խոդեր վերեր ը,
Կաթնաիփուր ջուր խմեր ը:
Ով չխադա էս պարը,
Լոյ, լոյ, լոյ, լոյ լո, վա՜յ լո,
Մեռնի յար՝ կդրի ճարը:
Պարբաշու կլխի լենոր,
Լոյ, լոյ, լոյ, լոյ լո, վա՜յ լո,
Տարավ իմ գլխի խելըր:

## 135 (215). ԼԱԼ ՈՒ ՄԱՐՋԱՆ

Լալ ու մարջան, լալ,
Լալ ֆինջան լալ:

Մեռը ծոըիր էրտալով,
Թըրերի ւիկ խաղալով,
Վա՛յ սերին, վա՛յ քըրին,
Վա՛յ սիրահարին:

Ըդ ի՞նչ դուշ ը ըն քըրին,
Դվե՛կ, դանիմ ըմ յարին,
Վա՛յ սերին, վա՛յ քըրին,
Վա՛յ սիրահարին:

Էլիր իմ ալավալեն,
Քաղիր իմ դրստով լալեն,
Խըրար չէգավ ըմ յարեն:
Լալ ու մարջան, լալ,
Լալ ֆինջան լալ:

## 136 (216). ԿԱՐՈՒՆ ԷՐ. ԷԳԱՎ ԱՇՈՒՆ

Կնածի կալը հըշան,
Ծալիծոն տրլի նշան:

Կարուն էր, էգավ աշուն էս ադեն,
Ռանագ ը գէրտամ, սալդատ ը գէրտամ,
Ա՛յ, լոտլի ախճի՛գ քու դըրդեն:

Յա՛ր ջան, մնամ քու հուսով,
Ըսոր էղավ մըր սուրպ նշան`
Չէնիս ընդլի ամոտով:

Կարուն էր, էգավ աշուն էս ադեն,
Ռանագ ը գէրտամ, սալդատ ը գէրտաս,
Ա՛յ, լոտլի ախճի՛գ քու դըրդեն:

Էգավ ժամը օղարություն էրտալու,
Խորոդ ախճի՛գ, յըս քու դըրդից`
Վըխենամ էղնիմ սըվդըլու:

Կարուն էր, էգավ աշուն էս ադեն,
Ռանագ ը գէրտամ, սալդատ ը գէրտամ,
Ա՛յ, լոտլի ախճի՛գ քու դըրդեն:

## 137.(217). ՄԱՆԴՐԻԳ ԹՊԻԳ ԻՐԵԿՆՈՅ

Հերգեյլի` հերգաց մնայ,
Մանդրիգ թպլիգ իրեկնոյ,
Սիրեյլի, սալդատ կնայ,
Ախճիգ` դղին դըրդ ու խոյ:

Ըլըգըվ պարծր սար ը,
Մանդրիգ թպլիգ իրեկնոյ,
Ճուր լը հիվնդին տեղ ը,
Ախճիգ` դղին դըրդ ու խոյ:

Սրևան բաղ իմ էնի,
Մանդրիգ թպլիգ իրեկնոյ,
Ջիգարս դաղ իմ էնի,
Ախճիգ` դղին դըրդ ու խոյ:

## 138 (218). ՀԱՆԻԳ ՆԻՆԱՐԷ, ՆԻՆԱՐ

Հանիգ նա՜յ, հանիգ նինարէ նինար,
Ջանիգ նինարէ նինար,
Հանիգ նինարէ նինար,
Ջանիգ նինարէ նինար:
Ճաղճի տուռը գսոսը,
Խնձոր քցիմ` գփոսը,
Յըս գքադոիմ ըն մարտույ,
Անգետ - անգետ գխոսը:
Հանիգ նայ, հանիգ նինարէ նինար,
Սև էր չոբանի էշը,
Հանիգ նինարէ նինար,
Չի տանի յարիս վեշը,
Ջանիգ նինարէ նինար:

## 139.(219). ԱՐԴՅՈՔ ՈՒՐ Է

Արդյոք ո՞ւր է, չի երևում ըմ լոտի յարը,
Ման էր գալիս Էրևանու Աստաֆյանի բուլվարը:

Ջոքա՛նք, տու հըյլի վըրեն,
Արդյոք ո՞ւր է, չի երևում ըմ գոգալ յարը,
Քու սերն էր թապէ վըրեն,
Ման էր գալիս Էրևանու Աստաֆյանի բուլվարը:

Տոլման գէպեմ բիբարով,
Արդյոք ո՞ւր է, չի երևում ըմ լոտի յարը,
Աասունցիքն են ջիգարով,
Ման էր գալիս Էրևանու Աստաֆյանի բուլվարը:

Գոռ՛նգ, սիրէ ջուխտագ բալիդ արևը,
Արդյոք ո՞ւր է, չի երևում ըմ լոտի յարը,
Յարս մնաց, Աասունի խոր ծորերը,
Ման էր գալիս Էրևանու Աստաֆյանի բուլվարը:

## 140 (220). ՆԱԶԷ
### 1

Հըրնակ, հըրնակ, հըր Նակէ, Նակէ,
Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ:
Կանաչ արաք հայ տարա,
Նակէ, Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ,
Յարիս տեսա` եդ տառա:
Նակէ, Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ:
Յար ջան, իմ արն ու քում,
Նակէ, Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ,
Աշխարի աքրէնք` ես ու տու,
Նակէ, Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ,
Հըրնակ, հըրնակ, հը՛ր Նակէ,
Նակէ, Նակէ, լէ, լէ, լէ, Նակէ:

## 141 (221). ՀՈՅ ՆԱԶԷ, ՆԱԶԷ
### 2

Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Տուշի Նակէ, լավ գզակէ:
Խոնդադը` քոքին է,
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Ախճիգ` դղի հոկին է,
Տուշի Նակէ, լավ գզակէ:
Էրնեգ քեզի, դարդ չունես,
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Վերի մալըն` յար չունես,
Տուշի Նակէ, լավ գզակէ:
Աասունցի եմ, սասունցի,
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Օվ կարա հեդս մրցի,
Տուշի Նակէ, լավ գզակէ:
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Հո՛յ Նակէ, Նակէ, Նակէ,
Տուշի Նակէ, լավ գզակէ:

## 142 (222). ԼԵՐ - ՆԱՐ

Լեր - նար, լեր - նար, լեր նարէ,
Չիդբէ Ծուշան դըլալ է:

Յար ջան, իմ արև ու տու,
Լեր - նար, լեր - նար, լեր - նարէ,
Աշխարհ աբրենք ես ու տու,
Չիդբէ Ծուշան դըլալ է:

Մաղնիքիս կաբուդ ագը,
Լեր - նար, լեր - նար, լեր - նարէ,
Թռավ ընգավ յէր բագը,
Չիդբէ Ծուշան դըլալ է:

Կնայի, բաղը մղա,
Լեր - նար, լեր - նար, լեր - նարէ,
Ման էգա՝ յարիս գտա,
Չիդբէ Ծուշան դըլալ է:

## 143 (223). ԿԱՔԱՎԸ ԹՌԱՎ
### 1

Կաքավը թռավ, նստավ քարին երգելու,
Ձեն ավեց սիրած յարին, ամա՞ն, կանչելու, սիրելու:
Էլի պարը պտրավ,
Կաքավը թռավ, նստավ քարին երգելու,
Յարս մեճը մոլորավ,
Սիրեցի նրան՝ բանուգ տարան,
Արդերը մնաց հերգելու, հերգելու:
Յարիս տեսա յայլի չոր,
Կաքավը թռավ, նստավ քարին երգելու,
Նման էր կարմիր խնձոր,
Սիրեցի նրան՝ խոպան կնաց,
Արդերը մնաց հերգելու, հերգելու:

## 144 (224). ԿԱՔԱՎԸ ԹՌԱՎ
### 2

Հերգեցի, հերգած մնաց,
Կաքավը թռավ, արդերս մնաց հերգելու.
Սիրեցի՝ բանուգ կնաց,
Կաքավը թռավ, արդերս մնաց հերգելու:
Ես մի ղուշ եմ էն քարին,
Հերգեցի, հերգած մնաց,
Ձեն կիդամ անուշ յարին,
Կաքավը թռավ, արդերս մնաց հերգելու:
Պարծր են Մարաթկու խաճեր,
Հերգեցի, հերգած մնաց,
Էրգիր - աշխարհ գաղաճեր,
Կաքավը թռավ, արդերս մնաց հերգելու:

## 145 (225). ՎԱՅ, ԼԷ, ԼԷ

Ղուշ իմ տարի թևավոր,
Դոշիտ խաչը՝ ցնավոր,
Յարա՞բ, էղնի*, օր մէ օր
Իկաս մըր դուն՝ թակավոր:

Վայ լէ, լէ, լէ, լէ,
Ջան լէ, լէ, լէ, լէ,
Սապանդարի մ'իղեք վիս,
Գէրտը հարսնիք՝ սոոսը վիս:

Դղա՛ քու ասուս Բարիս,
Քոլոդ՝ թեք գտրիս,
Յա մեռյո՛ւ, յա ա՛ռ վիս:

Վայ լէ, լէ, լէ, լէ,
Ջան լէ, լէ, լէ, լէ,
Սապանդարի մ'իղեք վիս,
Գէրտը հարսնիք՝ մռոնը վիս:

## 146 (226). ԱԽ, ՄՈՒՐԱԴ ԳԵՂԻ ՉԱՅԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈԼԵՐԸ

Ա՜խ, Մուրադ գեղի չայիրներն ու գոլերը,
Ա՜խ, յարս մնաց Մշու դաշտի հանդերը:

Մշու դաշտ գեր օուխտագ գեղ.
Ա՜խ, Մուրադ գեղի չայիրներն ու գոլերը,
Մեզ Մուրադ, մեզ՝ Մեղրագեղ,
Ա՜խ, յարս մնաց Մշու դաշտի հանդերը:
Անկեր բըլըք, ընքներ թուխ,
Ա՜խ, Մուրադ գեղի չայիրներն ու գոլերը,
Գաբեց քոֆին, թորգեց՝ բուխ:
Ա՜խ, յարս մնաց Մշու դաշտի հանդերը:
Մշու գէլեր պարագ մուխ,
Ա՜խ, Մուրադ գեղի չայիրներն ու գոլերը,
Մէ չաւ հոշի, մեզն էր՝ խուխ,
Ա՜խ, յարս մնաց Մշու դաշտի հանդերը:

Ա՜խ, Մուրադ գեղի չայիրներն ու գոլերը,
Ա՜խ, յարս մնաց Մշու դաշտի հանդերը:

## 147 (227). ՍԸՐ - ԼԻ ԼԻ ՔԸՉԸԼՈ

Սասնու սարիր մշուշ էր,
Սըր լի, լի, լի քըչըլո,
Ըմ յար՝ կըց քում անուշ էր,
Սըր լի, լի, լի, քըչըլո:

Ախճի՛, քու անուն Օսկի,
Սըր - լի, լի, լի քըչըլո,
Ընչո՞ւ չըս իկը խոսքի,
Սըր - լի, լի, լի, քըչըլո:

Սասունցի իմ սասունցի,
Սըր - լի, լի, լի, քըչըլո,
Թը զըռնաս՝ հեդս մրցի՛,
Սըր - լի, լի, լի, քըչըլո:

Գարմիր գոլը մասցու,
Սըր - լի, լի, լի, քըչըլո,
Յարս՝ գայնէ փեսայու,
Սըր - լի, լի, լի, քըչըլո:

## 148 (228). ՔՆՈ ՋԱՆ

Մասնու սարեն ճուր գիկեր
Քնո ջան, լէ՛ հոյրան,
Ինչքան խմեք, տուր գիկեր
Մամ խուրբան ուր գառան:
Քելէ քու քելքին մեռնիմ,
Քնո ջան, լէ՛ հոյրան,
Իմ յարի բոյին մեռնիմ,
Մամ խուրբան ուր գառան:
Հերիք էղավ, բոլ էլավ,
Քնո ջան, լէ՛ հոյրան,
Արուն՝ սրդիս գօլ էղավ,
Մամ խուրբան ուր գառան:
Մեռնիմ քու ասու սիրուն,
Քնո ջան, լէ՛ հոյրան,
Չէներ տու վիս էրերուն,
Մամ խուրբան ուր գառան:

## 149 (229). ՄԵԾ ԷՐԻ
### 1

Մեծ էրի, հայ մեծ էրի,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Ցերեգ էր, ցերեգ խեր էր,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի:
Ցերեգ էր, ցերեգ չէղավ,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Լընեգ ծվի դարդ չունիք,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի,
Հեռու տեղ խարխը չունիք,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մուրադ կեղ պուч է պռնէ,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի,
Ծամերս ի՝ թոկ է պռնէ,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մշու քաղքեն գիկամ ես,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի,
Քրդնուց իմ, գիլամ ես,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Օվալուսնագ լուսով էր,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Իմ յարի բոյ ըեսով էր,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի:
Ծիրան եմ ծառի ծերին,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:
Խառնվեր իմ թվերին,
Անուշ ջան, վմըր կալ մեծ էրի:
Մեծ էրի, հայ մեծ էրի,
Լէ, կառ ջան, վմըր կալ մեծ էրի:

## 150 (230). ՄԵԾ ԷՐԻ
### 2

Մեծ էրի, հա՛յ մեծ էրի,
Լո լա՛ո, սեր գամ մեծ էրի:
Դարին դավէրգու ասիս,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Խնձորն էր թառմէ կոդիս,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:
Խնձորի գես՝ խաչաչ էր,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Չորս կողմը՝ արչթաչ էր,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:
Մեծ էրի, հա՛յ մեծ էրի,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:
Աինու միճու թասն եմ,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Մոսես աղի՝ հարսն եմ,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:
Հերիք անցնես մեր պագով,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Մըր խորոդից հարսն աքով,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Ջըրգում՝ քի խընջըլ խորուն,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Թապի քու գարմիր արուն,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի,
Լցվի մըջ քու սոլերուն,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:
Մեծ էրի, հա՛յ մեծ էրի,
Լո լա՛ո, մեր գամ մեծ էրի:

## 151 (231). ԳԴԱՎԱԴ, ՀԸՅ, ԳԴԱՎԱԴ

Գդավադ, հը՛յ գդավադ,
Գդավադ, տեղին կնչից,
Ախճի՛գ, առ բիդիս ընչից:

Ախճի՛, տու հուր ու մուր իս,
Գդավադ, հայ գդավադ,
Ցըս ծառավ իմ, տու՝ ճուր իս,
Գդավադ, տեղին կնչից,
Ախճի՛գ, տու բիդիս ընչից:
Ախճի՛, քաղիր իս օւին,
Գդավադ, հայ գդավադ,
Ցըս խուրբան քու ստեղծողին,
Գդավադ, տեղին կնչից,
Ախճի՛գ, տու բիդիս ընչից:

## 152 (232). ՀՈ, ՀՈ, ԲԵԺԱՆ ՋԱՆ

Հո՛, հո՛, Բեժան ջան,
Գամիր քշը էկո ջան,
Դը շո՛ւղ էնը, թաղլան ջան,
Ամբիր էլան, ըկիվ ջան:

Հո՛, հո՛, Բեժան ջան,
Գամիր քշը էկս ջան,
Գէլի անիրավ քամին,
Մըր տադած գիդը ճրին:

Հո՛, հո՛, թառլան ջան,
Թեւիվ քշը, էկո օան,
Քոչ ու քուլֆաս՝ քու հուսին,
Դը շուդ էնը, ախպե՛ր օան,
Հո՜, հո՜, Բեժան ջան:

## 153 (233). ՄԵՐ ԿԱԼԵՐԸ

Հուպ տու էլնենք քարափը,
Մեր կալերը, ջեր կալերը,
Թոկ ու դուման, օ՜յ աման,
Հարսն անոտի, կիսուր՝ կոտի,
Տալ լէ կրակ, օ՜յ աման:
Քամին հարավային է,
Յարս՝ բանակային է,
Մեր կալերը, ջեր կալերը,
Թոկ ու դուման, օ՜յ աման,
Հարսն անոտի, կիսուր՝ կոտի,
Տալ լէ՝ յամա՜ն ու յամա՜ն:
Գրեմ յարիս նամակը,
Ո՞մ տամ տանի բարևը,
Մեր կալերը, ջեր կալերը,
Թոլ ու դուման, օ՜յ աման:

# Բ

# ԿԱՐՈՏԻ, ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԲԱՂՁՈՒԹՅԱՆ ԵՐԳԵՐ

## 1 (234). ՔԵԼԷ, ԼԱՈ

1

Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր,
Էրտանք ըն ծոր, քաղինք մատղաշ խավրծիլ,
Քաղինք, քաղինք էնինք մկի ճար ու դեղ,
Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր:

Ամեն պլին գիճներ քաղցրիգ մանանա.
Մեզ - մեզ փշուր գուլինք մըր սիրդ գիովնա.
Սասնու աշխարհ մըր տճվու դեմ գծովնա,
Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր:

Հօն արոսներ կաույ - կտյլի գերգին,
Ծիծեռնագներ թևիզ - թնիզ գծտփին,
Քըրեր՝ առանց մ'կի արծունք գթափիս,
Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր:

Ընտեխ մըր հեր, ընտեխ մըր մեր գչաղգին,
Անուշ գիլան, մրմուռ ծենով զ'զանճին,
Իմա՞լ զէղնի, իմա՞լ չէրտանք մըր էրգիր,
Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր:

- Վըլը ապո՛, վըլը գէրտանք ծըր էրգիր,
Գէրտանք ծըր Մուշ, գէրտանք ծըր Վան, ծըր Սասուն,
Թեզուկ քանց կեդ՝ հոսը զարմիր մըր արուն,
Քելէ՛ լա՛ո, քելէ՛ էրտանք մըր էրգիր:

## 2 (235). ԷԼԻ, ԼԱՈ

2

Քելէ՛, լա՛ո, քելէ՛, էրտանք մըր էրգիր,
Էլի՛, լա՛ո, էլի՛, էրտանք մըր էրգիր,
Օընգլվը ճրերայ՝ փարչմ' ճուր խմիմ,
Էլի՛, լա՛ո, մաղաղ իմ քկի, էրտանք մըր էրգիր:

Թողինք, լա՛ո, ընդեխ խորուդ հարս, ախճիզ,
Էզանք ընզանք, լա՛ո, հիւղը քարաստան,
Սասունցու հարգտնքն ու քաղիվ չմոռնանք,
Էլի՛, լա՛ո, էլի՛, խուրբան իմ քկի, էրտանք մըր էրգիր:

Հիդը դեխ լը, լա՛ո, դեսանք շադ ավեր,
Ուրուր էգավ դարավ կըմ խորող ծակեր,
Օընգլվը ճրերայ՝ փարչմ' ճուր խմենք,
Էլի՛, լա՛ո, խուրբան իմ քկի, էլի՛, էրտանք մըր էրգիր:

## 3 (236). ԷԼԻ, ԼԱՈ

3

Էլի՛, լա՛ո, էլի՛, էրտանք մըր էրգիր,
Իմցի՛ լաո, իմցի՛ էրտանք Տաճկաստան,
Չմոռանանք մըր պապազան հողը,
Էլի՛, լա՛ո, էլի՛, հըյրան իմ քկի: